ՔՀԿ ՉԱՓԻՉ

Նպաստավոր միջավայրի և ՔՀԿ-ների իրավազորման կողմնացույց

ՀԱՅԱՍՏԱՆ 2023

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ

Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

European Center for
Not-for-Profit Law

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ
ԻՆԹԵՐՆԵԾՆԼ
հակակոռուպցիոն կենտրոն

ՔՀԿ չափիչ 2023 Հայաստան

Զեկույցի ժամանակահատված՝ 2023 թվականի հունվար-նոյեմբեր

Հեղինակներ՝ Անուշ Հակոբյան, Տաթևիկ Մարգարյան, *Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն* (ԹԻՀԿ)

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՀԿ) առաքելությունն է կոռուպցիան նվազեցնելու ու ժողովրդավարությունն ամրապնդելու ճանապարհով նպաստել լավ կառավարմանը Հայաստանում:

Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն (ECNL) հիմնադրամը քաղաքացիական հասարակության վրա ազդող քաղաքականությունների և օրենքների ոլորտում առաջատար ռեսուրսային և հետազոտական կենտրոն է Եվրոպայում: ECNL-ն ստեղծում է գիտելիք, իրավազորում գործընկերներին և օգնում ստանդարտներ սահմանել քաղաքացիական ազատությունների ձևավորման, պաշտպանության և ընդլայնման համար:

Հեղինակները շնորհակալություն են հայտնում զեկույցի մշակման աշխատանքներին իրենց ներդրումն ունեցած բոլոր աջակիցներին, ներառյալ «ՔՀԿ չափիչ» ծրագրի փորձագիտական խմբին, Խորհրդատվական խորհրդի անդամներին, հարցազրույցներին մասնակցած փորձագետներին, ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցներին, ECNL-ի թիմին:

«ՔՀԿ չափիչ՝ նպաստավոր միջավայրի և ՔՀԿ-ների իրավազորման կողմնացույց» ծրագիրն իրականացվում է «Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն» (ECNL) հիմնադրամի և իր գործընկերների՝ Հայաստանում «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի», Ադրբեջանում «Էմ-Ջի Քընսալթինգ» ՍՊԸ-ի, Վրաստանում «Քաղաքացիական հասարակության ինստիտուտի», Մոլդովայում «Պրոմո-Լեքս» ընկերակցության, իսկ Ուկրաինայում՝ «Անկախ քաղաքական հետազոտությունների ուկրաինական կենտրոնի» (UCIPR) կողմից:

Այս փաստաթուղթը մշակվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատու են միայն հեղինակները, և այն պարտադիր չէ, որ արտացոլի Եվրոպական Միության դիրքորոշումը:

© 2023 Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն և Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, բոլոր հեղինակային իրավունքները պաշտպանված են։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 4

I. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ 5

II. ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԹՎԵՐՈՎ 10

3.1 ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ 11
3.2 ՀԱՎԱՍԱՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ 13
3.3 ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ 15
3.4 ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ 17
3.5 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ 19
3.6 ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ 25
3.7 ՄԱՄՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ 30
3.8 ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 32
3.9 ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ 36
3.10 ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՔՀԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 40
3.11 ԹՎԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 44

IV. ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 48

V. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 50

VI. ՀՂՈՒՄՆԵՐ 52

VII. ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐ 56

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱԱԾ	Ազգային անվտանգության ծառայություն
ԱԺ	Ազգային ժողով
ԱլԳ	Արևելյան գործընկերություն
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԲԿԳ	Բաց կառավարման գործընկերություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԶԼՄ	Զանգվածային լրատվամիջոց
ԹԻՀԿ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
ԼԳԲՏ+	Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, քվիր, ինտերսեքս և այլն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՍՊԸ	Սահմանափակ պատասխատվությամբ ընկերություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՓԼ/ԱՖ	Փողերի լվացում և ահաբեկչության ֆինանսավորում
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ECNL	Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն
SLAPP	Ռազմավարական հայցեր հանրային մասնակցության դեմ

I. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Երկրի ընդհանուր իրավիճակը և քաղաքացիական հասարակության միջավայրին առնչվող հիմնական միտումները

2023 թվականին Հայաստանի ներքին ու արտաքին քաղաքական խոսույթի և հանրային ուշադրության կիզակետում Արցախում ծավալված իրավիճակն էր: 2022 թվականի դեկտեմբերից սկսած՝ ավելի քան 9 ամիս, Արցախը գտնվում էր Ադրբեջանի կողմից շրջափակման մեջ, ինչը հանգեցրեց հումանիտար լուրջ խնդիրների, այդ թվում՝ սննդի, դեղորայքի, գազի և էլեկտրականության սղության՝ հոգեբանական տառապանք պատճառելով մարդկանց թե՛ Արցախում, թե՛ Հայաստանում[1]: 2023 թվականի սեպտեմբերի 19-ին Ադրբեջանը մեկ օր տևողությամբ զանգվածային ռազմական հարձակում իրականացրեց արցախյան բնակավայրերի վրա, որը բերեց հարյուրավոր զոհերի ու անհայտ կորած անձանց: Սա ստիպեց անկախություն հռչակած Արցախի Հանրապետությանը հանձնվել՝ գազաթնակետի հասցնելով Ադրբեջանի կողմից տևական էթնիկ զտման փորձերը: Արցախի գրեթե ողջ բնակչությունը՝ ավելի քան 100 հազար մարդ, 5 օրվա ընթացքում ստիպված էր փախչել Հայաստան՝ անվտանգություն և տարրական կենսապայմաններ գտնելու հույսով[2]:

Տարվա ընթացքում լարվածություն կար նաև Հայաստանի սահմաններին, քանի որ չնայած խաղաղության շուրջ ընթացող բանակցություններին և 2023 թվականի փետրվարից Հայաստանի սահմաններին ԵՄ քաղաքացիական առաքելության տեղակայմանը[3], ադրբեջանական զինուժի կողմից պարբերաբար կրակոցներ են գրանցվել՝ զոհեր բերելով երկու կողմի համար[4]: Արցախում հումանիտար իրավիճակի վատթարացումը, Հայաստանի

---

[1] Azerbaijan: Blockade of Lachin corridor putting thousands of lives in peril must be immediately lifted, Amnesty International, 09.02.2023, https://www.amnesty.org/en/latest/news/2023/02/azerbaijan-blockade-of-lachin-corridor-putting-thousands-of-lives-in-peril-must-be-immediately-lifted/; A Serious Risk of Genocide: Recent Developments in Nagorno-Karabakh, Lemkin Institute for Genocide Prevention, 07.06.2023, https://www.lemkininstitute.com/single-post/a-serious-risk-of-genocide-recent-developments-in-nagorno-karabakh.

[2] Nagorno-Karabakh: Over 100,000 flee to Armenia, DW, 30.09.2023, https://www.dw.com/en/nagorno-karabakh-over-100000-flee-to-armenia/a-66969667 ; Explainer: Why are 120,000 people about to move from Nagorno-Karabakh? Reuters, 24.09.2023, https://www.reuters.com/world/why-are-120000-people-about-move-nagorno-karabakh-2023-09-24/.

[3] Armenia: EU launches a civilian mission to contribute to stability in border areas, Council of the EU, Press release, 20 February 2023 https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2023/02/20/armenia-eu-launches-a-civilian-mission-to-contribute-to-stability-in-border-areas/.

[4] EU observers came under fire on Azerbaijan border, officials report, Politico.eu, 16.08.2023, https://www.politico.eu/article/azerbaijan-armenia-border-gunfire-european-union-observers-verin-shorzha-united-nations-nagorno-karabakh/ , Արտահերթ զեկույց Սյունիքի մարզի Տեղ համայնքի և Գեղարքունիքի մարզի սահմանամերձ համայնքների փաստահավաք գործունեության արդյունքների վերաբերյալ, (2023 թվականի ապրիլ-մայիս), Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, Երևան, 2023, https://www.ombuds.am/images/files/76adf8c4ef52d036fab368d87e0bea55.pdf, Արտահերթ զեկույց Հայաստանի Հանրապետության Երասխ բնակավայրի ուղղությամբ 2023 թվականի հունիսից ադրբեջանական զինված ուժերի գնդակոծությունների հետևանքով մարդու իրավունքների շարունակական խախտումների վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, Երևան, հուլիսի 18, 2023, https://www.ombuds.am/images/files/4e73af39ae6617df7437605f57eb01cd.pdf, Ինտենսիվ կրակոցներ Սոթքի

սահմաններին ռազմական լարվածությունը՝ ադրբեջանական զինված ուժերի կողմից Հայաստանի ինքնիշխան տարածքի առանձին հատվածներում շարունակվող օկուպացիայի ֆոնին, ինչպես նաև Ադրբեջանի ղեկավարության կողմից ծավալված հակահայկական քարոզչությունը և տարածքային պահանջները սրված իրավիճակ էին ստեղծել երկրի ներսում, և հենց այս թեմաներն էին գերակշռում ներքին քաղաքական զարգացումներում և հանրային տրամադրություններում: Վարչապետի հրաժարականի պահանջով ընդդիմության և այլ քաղաքական նախաձեռնությունների բողոքի ակցիաները առավել ինտենսիվ վերսկսվեցին 2023 թվականի սեպտեմբերին Արցախում տեղի ունեցած էթնիկ զտումներից հետո: Մի շարք հավաքներ են անցկացվել նաև Արցախում հումանիտար խնդիրների նկատմամբ միջազգային կազմակերպությունների ուշադրությունը գրավելու նպատակով:

2023 թվականի ընթացքում քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ) շարունակել են իրենց ամենօրյա գործունեությունը՝ որոշ դեպքերում ավելի մեծ ուշադրություն հատկացնելով հումանիտար և մարդու իրավունքների հարցերին: 2023 թվականի սեպտեմբերից հետո զգալի թվով ՔՀԿ-ներ իրենց ջանքերը կենտրոնացրեցին Արցախից բռնի տեղահանվածներին օգնելու, տեղեկատվական, հոգեբանական, սոցիալական, իրավական աջակցություն տրամադրելու, մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ փաստահավաք նախաձեռնություններ իրականացնելու, սննդի, կացարանի, հագուստ և հիգիենիկ պարագաների հիմնարար կարիքները հոգալու համար միջոցներ հայթայթելու ուղղությամբ:

Քաղաքացիական հասարակության միջավայրի առանցքային զարգացումները

Հայաստանում ՔՀԿ միջավայրի ընդհանուր գնահատականը 2023 թվականին 2022 թվականի համեմատ չի փոխվել (առավելագույն 7-ից 4,8 միավոր): Ամենաբարձր գնահատականներն ունեցող երեք ոլորտները նույնն են, ինչ 2022 թվականին՝ միավորումների ազատություն (5,7 միավոր), ֆինանսավորման մատչելիություն (5,3) և խաղաղ հավաքների ազատություն (5,3 միավոր), իսկ ամենացածր գնահատված ոլորտներն են պետություն-ՔՀԿ համագործակցությունը (4,0 միավոր), պետական աջակցությունը (4,1 միավոր), պետության կողմից պաշտպանության պարտականությունը (4,5 միավոր) և թվային իրավունքները (4,5 միավոր):

Մի շարք նշանակալի զարգացումներ են արձանագրվել «ՔՀԿ չափիչի» առանձին ոլորտներում: **Միավորումների ազատության** և **պետության կողմից պաշտպանության** ոլորտում հիմնական զարգացումը կապված է 2023 թվականին ուժի մտած՝ ՔՀԿ-ների կողմից իրական շահառուների հայտարարագրման պահանջի հետ: Նախ, ՔՀԿ-ների շրջանում իրական շահառուի ինստիտուտի ընկալման խնդիր կա, բացի այդ՝ իրական շահառուների տվյալների փոփոխությունները գրանցելիս լրացուցիչ ծախսեր են առաջանում: Այս խնդիրների, ինչպես նաև զգայուն ոլորտներում աշխատող ՔՀԿ-ների արդյունավետ պաշտպանության պակասի պատճառով պետության կողմից պաշտպանության ոլորտում գնահատականի վատթարացում է արձանագրվել (4,6-ից իջնելով 4,5 միավոր):

Ֆինանսավորման մատչելիության հետ կապված հիմնական խնդիրների շարքում

հատվածում. հայկական կողմը հաղորդում է 3 զոհի և 2 վիրավորի, ադրբեջանականը՝ 3 վիրավորի մասին, Ազատություն ռադիոկայան, 01.09.2023, https://www.azatutyun.am/a/32573991.html:

զեկույցում առանձնացվել է դրամաշնորհային ծրագրերի՝ որպես ծառայությունների մատուցում մեկնաբանելը և համապատասխանաբար ավելացված արժեքի հարկով (ԱԱՀ) հարկման ենթակա լինելը այն դեպքերում, երբ դրամաշնորհ ստացող ՔՀԿ-ի տարեկան շրջանառությունը անցնում է սահմանված շեմը: Սա կարող է բերել գործնականում ֆինանսավորման մատչելիության սահմանափակման, ուստի, չնայած ընդհանուր առմամբ այս ոլորտում իրավական դաշտը բարենպաստ է և ՔՀԿ-ները հնարավորություն ունեն տարբեր աղբյուրներից ֆինանսավորում հայթայթելու, ոլորտի ընդհանուր գնահատականը նվազել է (5,4-ից դառնալով 5,3 միավոր):

Որոշումների կայացմանը մասնակցության իրավունքի ոլորտում արձանագրվել է իրավական դաշտի բարելավում՝ շնորհիվ կառավարության կողմից ընդունված Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության 2023-2025 թվականների ճանապարհային քարտեզի և արդյունքային շրջանակի, ինչպես նաև Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) գործողությունների վերանայված ծրագրի: Այս փաստաթղթերը լրացուցիչ միջոցառումներ են նախատեսում հանրային մասնակցության բարելավման ուղղությամբ, ներառյալ՝ մասնակցային կառավարման մշտադիտարկման ու ընթացակարգերի սպասարկման ինստիտուցիոնալ մեխանիզմի ձևավորումը և մասնակցային կառավարման թվային ու անցանց գործիքների բարելավումը: Արդյունքում, բարձրացել է նաև ոլորտի ընդհանուր գնահատականը (4,8-ից դառնալով 4,9 միավոր): Այնուամենայնիվ, վատթարացում է արձանագրվել տեղեկատվության հասանելիության առումով, որը պայմանավորված է գործնականում տեղեկություններ ստանալու մարտահրավերների և «Պետական գաղտնիքի մասին» ու «Տեղեկատվության ազատության մասին» օրենքներում «սահմանափակ տարածման տեղեկության» նոր հասկացության ներդրմամբ:

Ինչ վերաբերում է **խոսքի ազատության** ոլորտին, թեև իշխանությունները ՔՀԿ-ների հետ համատեղ մշակում են լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող օրենսդրության բարեփոխումների հայեցակարգը, 2023 թվականին մի շարք օրենսդրական նախաձեռնություններ պատշաճ կերպով չքննարկվեցին ՔՀԿ-ների հետ: Բազմաթիվ են եղել լրատվամիջոցների և լրագրողների դեմ զրպարտության ու վիրավորանքի հիմքով դատական հայցերը՝ պահանջվող փոխհատուցման զգալի չափերով: Բացի այդ, մի շարք դատական հայցեր են հարուցվել անհատների դեմ՝ սոցիալական ցանցերում կատարած հրապարակումների հիման վրա: Ուստի այս ոլորտի գործնական դաշտի գնահատականը նվազել է՝ արդյունքում հանգեցնելով ոլորտի ընդհանուր գնահատականի նվազմանը (4,8-ից դառնալով 4,7 միավոր):

Բարելավում է արձանագրվել **պետական աջակցության** ոլորտի օրենսդրական դաշտում՝ պայմանավորված «Կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ, որը կարգավորումներ է նախատեսում կամավորության սահմանման և կամավորների իրավունքների վերաբերյալ: Սակայն պետական ֆինանսավորման և ՔՀԿ-ների ու դոնորների համար հարկային խթանների պակասի հետ կապված խնդիրները այս ոլորտում մնում են նույնը, ուստի ոլորտի նախորդ տարվա գնահատականը պահպանվել է (4,1 միավոր):

«ՔՀԿ չափիչ» զեկույցի մյուս ոլորտներում գնահատականների փոփոխություն չի արձանագրվել: **Հավասար վերաբերմունքի** ոլորտում գրանցման և ձեռնարկատիրական գործունեության հարկման հարցերում տնտեսվարողների և ՔՀԿ-ների նկատմամբ անհավասար վերաբերմունքը մնում է նույնը, ինչ նախորդ տարիներին: **Խաղաղ հավաքների ազատության** ոլորտում ևս արձանագրվել են նույն խնդիրները, ինչ նախորդ

տարի: Մասնավորապես, շարունակվել են հավաքների մասնակիցների իրավունքների ոտնահարման դեպքերը, իսկ նախորդ միջադեպերի համար ոստիկանները պատշաճ պատասխանատվության չեն ենթարկվել: ՀՀ օրենսդրությունը երաշխիքներ է նախատեսում **մասնավոր կյանքի իրավունքի** պաշտպանության համար, սակայն այս ոլորտում բարելավման կարիք կա՝ հաշվի առնելով ժամանակակից տեխնոլոգիաները և անձնական տվյալների կառավարման և անվտանգության հետ կապված ռիսկերը: Հսկողության գործողությունների օրինականության նկատմամբ վերահսկողության բացակայությունը այս ոլորտի գործնական դաշտի հիմնական մարտահրավերներից է:

Պետություն-ՔՀԿ համագործակցության կամ ՔՀԿ-ների զարգացման վերաբերյալ Հայաստանում որևէ կոնկրետ քաղաքականություն կամ ռազմավարություն չկա: Կառավարության հետ ԹԻՀԿ երկխոսության արդյունքում ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից քննարկումներ են կազմակերպվել ՔՀԿ նպաստավոր միջավայրի առանձին բաղադրիչների շուրջ: Նախորդ տարիներին արձանագրված՝ հանրային խորհուրդների և այլ խորհրդակցական մարմինների ակտիվության ու արդյունավետության հետ կապված խնդիրները նույնն են մնացել:

2023 թվականին կառավարությունը մի շարք քայլեր է ձեռնարկել **թվային իրավունքների** ոլորտում՝ ուղղված մեդիա գրագիտության զարգացմանը, ինտերնետ հասանելիության ապահովմանը և թվային ստանդարտների խթանմանը: Հսկողության նպատակներով տեխնոլոգիաների օգտագործումը կարգավորվում է օրենքով և սահմանափակվում է նեղ նպատակներով, սակայն գործնականում հեռախոսային և էլեկտրոնային հաղորդակցությունների ապօրինի հսկողության դեպքեր են գրանցվել:

Առանցքային առաջարկություններ

2023 թվականին սահմանափակ առաջընթաց է գրանցվել 2022 թվականի «ՔՀԿ չափիչ» զեկույցի առաջարկությունների իրականացման հարցում: ՔՀԿ-ների համար մարտահրավեր հանդիսացող խնդիրները, որոնց ուղղությամբ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել, նույնն են մնացել: Այս խնդիրները կապված են նախ և առաջ ֆինանսական կայունության, բովանդակալից մասնակցության և պետության կողմից ոչ բավարար պաշտպանության հետ: Ըստ այդմ, առաջիկա ժամանակահատվածում ՔՀԿ միջավայրը բարելավելու համար կառավարությանը և համապատասխան կառույցներին կոչ է արվում ՔՀԿ-ների ու բոլոր շահագրգիռ կողմերի հետ միասին իրականացնել հետևյալ յոթ առաջարկությունները, որոնք որպես առաջնահերթ են ընտրվել 11 ոլորտների 29 առաջարկներից (այս յոթից հինգը վերահաստատում են 2022 թվականի զեկույցի առաջարկությունները):

1. ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ ապահովել, որ պետական մարմինները պարտադիր աուդիտի գումար նախատեսեն դրամաշնորհների և գնումների համար նախատեսված բյուջեում, ինչպես նաև քննարկել աուդիտի ենթակա գումարի շեմի բարձրացման հնարավորությունը՝ աուդիտի համար նախատեսված ծախսերը նվազեցնելու և գումարը դրամաշնորհային բյուջե ուղղելու նպատակով:
2. Պետությանը՝ օգտագործել մասնակցության առկա ինստիտուցիոնալ մեխանիզմները և ապահովել բովանդակալից մասնակցություն, այդ թվում՝ ներգրավել ՔՀԿ-ներին քաղաքականության մշակման վաղ փուլերում, հասցեագրել e-draft հարթակի խնդիրները, բավարար ժամանակ տրամադրել խորհրդակցությունների համար, ավելի հաճախ դեմառդեմ քննարկումներ

կազմակերպել, այդ թվում՝ մարզերում, հնարավորինս հաշվի առնել և ներառել ՔՀԿ-ների փաստահենք և հիմնավորված առաջարկությունները:

3. Ազգային ժողովին՝ մեխանիզմներ նախատեսել պատգամավորների հեղինակած նախագծերի պարտադիր հանրային քննարկումներ իրականացնելու և իրավական նախագծերի վաղ փուլերում ՔՀԿ-ներին ներգրավելու համար:

4. Ազգային ժողովին՝ օրենսդրական փոփոխություններ իրականացնել՝ ՔՀԿ-ներին հնարավորություն տալով հանրային շահերը ներկայացնել դատարանում՝ իրենց նպատակների շրջանակում, և ապահովել, որ նրանք կարողանան գործնականում օգտվել այս իրավունքից՝ մեղմելով չափազանց բարդ պահանջները և առնչվող վարչարարական ընթացակարգերը:

5. Պետությանը՝ համարժեք պաշտպանություն ապահովել ՔՀԿ-ներին ուղղված ատելության խոսքից և հարձակումներից, այդ թվում՝ խտրականության դեմ մարմնի ստեղծման, հրապարակային հայտարարությունների և ողջամիտ ժամկետում ՔՀԿ-ների ու ակտիվիստների դեմ հարձակումների պատշաճ քննության միջոցով, ինչպես նաև SLAPP հայցերի դեմ օրենսդրական ու գործնական միջոցառումներ ձեռնարկելով:

6. Ազգային ժողովին և կառավարությանը, մասնավորապես ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ ՔՀԿ-ների համար ավելի բարենպաստ հարկային միջավայր ստեղծել, որը կօգնի բարելավել տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ անհատների և տնտեսվարող սուբյեկտների նվիրատվություններից և ուղղակի ձեռնարկատիրական գործունեությունից ֆինանսավորում և բնաիրային աջակցություն հայթայթելու հնարավորությունները: Մասնավորապես, անհրաժեշտ է դյուրինացնել բարեգործական գործունեությունը հարկերից ազատելու ընթացակարգերը, տնտեսական գործունեությամբ զբաղվող ՔՀԿ-ների համար ավելի բարենպաստ հարկային ռեժիմ ապահովել, ավելի զգալի հարկային արտոնություններ տրամադրել անհատների և ընկերությունների նվիրատվությունների համար և ԱԱՀ-ից ազատել ՔՀԿ-ներին տրամադրվող բնաիրային նվիրատվությունները:

7. Կառավարությանը՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել կիբերանվտանգությունը բարելավելու և անօրինական լրտեսական ծրագրերից պաշտպանություն ապահովելու ուղղությամբ:

II. ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԹՎԵՐՈՎ

Բնակչությունը՝ 2 976 800 մարդ (2023 թ. հունվարի 1-ի դրությամբ)[5] | **Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն՝** 7,014 ԱՄՆ դոլար (2022)[6] | **ՔՀԿ-ների քանակը՝** 6331 հասարակական կազմակերպություն, 1667 հիմնադրամ[7] | **ՔՀԿ-ների քանակը 10 000 բնակչի հաշվով՝** 26,9 | **ՔՀԿ-ի գրանցման վճար՝** 10 000 ՀՀ դրամ[8] | **Ազատությունն աշխարհում 2023՝** 54/100 (մասամբ ազատ)[9] | **Մամուլի ազատության համաշխարհային ինդեքս 2023՝** 70.61 (180 երկրներից 49-րդը)[10]

Երկրի գնահատական՝	**4.8**
Իրավական դաշտ՝	**5.2**
Գործնական դաշտ՝	**4.4**

Գնահատման սանդղակը ներառում է 1-ից 7 բալ, որտեղ 1-ը ամենացածր հնարավոր գնահատականն է (ծայրաստիճան անբարենպաստ՝ ավտորիտար միջավայր), իսկ 7-ը՝ ամենաբարձր հնարավոր գնահատականը (չափազանց բարենպաստ միջավայր):

Ոլորտ	Ընդհանուր	Իրավական	Գործնական
Միավորումների ազատություն	**5.7**	5.8	5.6
Հավասար վերաբերմունք	**4.9**	5.0	4.8
Ֆինանսավորման մատչելիություն	**5.3** ↓	5.8	4.8 ↓
Խաղաղ հավաքների ազատություն	**5.3**	5.7	4.9
Որոշումների ընդունման գործընթացում մասնակցության իրավունք	**4.9** ↑	5.4 ↑	4.3
Խոսքի ազատություն	**4.7** ↓	5.2	4.2 ↓
Մասնավոր կյանքի իրավունք	**4.9**	5.8	3.9
Պետության կողմից պաշտպանության պարտականություն	**4.5** ↓	5.2 ↓	3.8 ↓
Պետական աջակցություն	**4.1**	4.3 ↑	3.9
Պետություն-ՔՀԿ համագործակցություն	**4.0**	4.3	3.6
Թվային իրավունքներ	**4.5**	4.9	4.0

Սլաքները ցույց են տալիս բարելավում կամ վատթարացում՝ անցյալ տարվա գնահատականների համեմատ:

---

[5] Ժողովրդագրությունը, ՀՀ կառավարություն, https://www.gov.am/am/demographics/:
[6] ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով. Հայաստան, Համաշխարհային Բանկ, https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=AM:
[7] Տվյալները տրամադրվել են 2023 թ. օգոստոսի 31-ի դրությամբ՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից՝ ի պատասխան ԹԻՀԿ հարցման:
[8] Պետական գրանցման/հաշվառման/ համար անհրաժեշտ փաստաթղթեր, տուրքերի դրույքաչափեր և ժամկետներ, Էլեկտրոնային Ռեգիստր, Հայաստանի Հանրապետության կառավարություն, https://www.e-register.am/am/docs/49:
[9] Freedom in the World 2023, Countries and Territories, Freedom House, https://freedomhouse.org/countries/freedom-world/scores:
[10] Reporters Without Borders, 2023 World Press Freedom Index, https://rsf.org/en/index:

III. ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

3.1 Միավորումների ազատություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ **5.7 / 7**

Իրավական դաշտ՝ **5.8 / 7**	Գործնական դաշտ՝ **5.6 / 7**

Հայաստանում միավորումների ազատությունը երաշխավորված է օրենսդրությամբ: ՔՀԿ-ները (հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները) էական դժվարությունների չեն հանդիպում գրանցման և գործունեության ընթացքում: Քաղաքացիական նախաձեռնություններից չի պահանջվում գրանցվել որպես իրավաբանական անձ, չկան նաև առցանց միավորումներ կազմելու սահմանափակումներ: Գրանցման ընթացակարգը պարզ է և ոչ թանկ, թեև լինում են կանոնադրությունների բազմակի վերանայման դեպքեր: Հասարակական կազմակերպությունների (ՀԿ) գրանցումն ավելի արագ է իրականացվում այն դեպքում, եթե հիմնադիրներն օգտվում են կանոնադրության նմուշային ձևից: Սակայն այս նմուշը կանոնադրության միայն մեկ տարբերակ է առաջարկում և, օրինակ, անդամակցության պահանջների կամ ղեկավարման կառուցվածքի փոփոխությունների հնարավորություն չի տալիս: ՔՀԿ-ները առցանց գրանցվելու հնարավորություն դեռ չունեն, որը կապված է տեխնիկական խնդիրների հետ: Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի (այսուհետ՝ պետռեգիստր) որոշ մարզային գրասենյակներ վերջին տարվա ընթացքում փակվել են, ինչը նշանակում է, որ ՀԿ կամ հիմնադրամ գրանցելու համար հարկ է ուղևորվել Երևան կամ մարզկենտրոն: Այն ՔՀԿ-ները, որոնք այլևս չեն գործում, խուսափում են լուծարման գործընթաց սկսել՝ դրա հետ կապված վարչարարության և ծախսերի պատճառով:

ՀԿ-ներն ու հիմնադրամները պարտավոր են տարեկան հաշվետվություններ ներկայացնել իրենց բյուջեի և գործունեության վերաբերյալ: Իրավական այս պահանջները չկատարելու համար պատժամիջոցներ են սահմանված, որոնց կիրառման լիազոր մարմինը Պետական եկամուտների կոմիտեն է: ՔՀԿ-ների տարեկան հաշվետվությունները հրապարակվում են PDF ձևաչափով, ինչը դժվարացնում է համապատասխան տեղեկատվության որոնումը և վերլուծությունը: Բացի այս հաշվետվություններից, ՔՀԿ-ները պետք է նաև ամեն տարի հայտարարագրեն իրենց իրական շահառուներին. ոչ առևտրային կազմակերպությունների նկատմամբ այս պահանջը ուժի մեջ է մտել 2023 թվականից: «Իրական շահառու» հասկացությունը թյուրիմացություն է առաջացրել ՔՀԿ-ների շրջանում, իսկ իրական շահառուների վերաբերյալ տվյալների փոփոխության դեպքում լրացուցիչ ծախսեր են անհրաժեշտ:

Միավորումների ազատության ոլորտի գնահատականները 2022 թվականի համեմատ նույնն են մնացել: Ուժի մեջ են մնացել «ՔՀԿ չափիչի» նախորդ զեկույցի առաջարկները՝ առցանց գրանցման հնարավորություն տալու և ՔՀԿ-ների տարեկան հաշվետվությունների բազան արդիականացնելու վերաբերյալ, թեև համապատասխան պետական մարմինների

հետ քննարկումներից հետո վերջիններս հավաստիացրել են, որ այս ուղղությամբ քայլեր կձեռնարկվեն: Բացի այդ, առաջարկվում է գրանցման համար օգտագործվող կանոնադրության նմուշը ավելի ճկուն դարձնել և չեղարկել իրական շահառուների տվյալների փոփոխության համար ՔՀԿ-ներից պահանջվող վճարը:

Ոլորտի հիմնական բացահայտումներ

1) ***Մարզային ՔՀԿ-ները խնդիրների են հանդիպում՝ ստիպված լինելով ուղևորվել պետռեգիստրի գրասենյակ:***

Առցանց գրանցումը ՔՀԿ-ների համար դեռևս հասանելի չէ: Ըստ պետռեգիստրի կողմից ներկայացված տեղեկատվության՝ տեխնիկական և ծրագրային ապահովման համապատասխան խնդիրների լուծումը ակնկալվում է 2024 թվականին՝ նոր էլեկտրոնային համակարգի գործարկմամբ[11]: Մյուս կողմից, թեև մի քանի տարի առաջ ՔՀԿ-ներին պետռեգիստրի՝ մարզերում տեղակայված գրասենյակներում գրանցվելու հնարավորություն էր տրվել, 2023 թվականի ընթացքում այս գրասենյակների կեսից ավելին փակվել է օպտիմալացման նպատակներով: Այսպիսով, հասարակական կազմակերպություն կամ հիմնադրամ գրանցելու համար հիմնականում անհրաժեշտություն է առաջանում մեկնել մարզկենտրոն կամ մայրաքաղաք Երևան: Սա լրացուցիչ դժվարություններ է ստեղծում հեռավոր բնակավայրերում տեղակայված ՔՀԿ-ների հիմնադիրների համար, քանի որ նրանցից ավելի շատ ժամանակ և ռեսուրսներ պահանջվում պետռեգիստրի գրասենյակ (հաճախ բազմակի անգամ) մեկնելու համար:

2) ***Իրական շահառուներին հայտարարագրելու նոր պահանջը թյուրիմացություն է առաջացրել ՔՀԿ-ների շրջանում և հիմնականում համարվում է անհարկի ձևականություն:***

Ըստ օրենքի, 2023 թվականի հունվարից սկսած գրանցված ՔՀԿ-ները պարտավոր են պետռեգիստրում հայտարարագրել իրենց իրական շահառուներին[12]: Սակայն իրական շահառուների գաղափարի նրանց ընկալումը տարբերվում է բիզնես ընկերությունների «իրական շահառուների» ստանդարտ սահմանումից: Թյուր մեկնաբանության պատճառով որոշ ՔՀԿ-ներ մտածում են, որ գուցե նրանք պետք է հայտարարագրեն իրենց բոլոր շահառուներին (օրինակ՝ կանանց իրավաբանական օգնություն տրամադրող կազմակերպությունների դեպքում շահառուները հենց այդ կանայք են), ինչը անհամաչափ բեռ կդառնա և կխախտի շահառուների մասնավոր կյանքի իրավունքը[13]: Բացի այդ, այս պարտավորությունը կազմակերպությունների համար նոր ծախսեր է առաջացնում: Իրական շահառուների առաջին հայտարարագիրը, ինչպես նաև յուրաքանչյուր տարի այդ տվյալների հաստատումը, անվճար է և պարտադիր բոլոր կազմակերպությունների համար: Սակայն տվյալների փոփոխության գրանցման համար անհրաժեշտ է վճարել 10000 դրամ: Այս վճարը համարժեք է պետռեգիստրում այլ փոփոխությունների (օրինակ՝ կանոնադրության փոփոխությունների) գրանցման վճարին[14]: Իրական շահառուների

---

[11] Տեղեկությունը տրամադրվել է պետռեգիստրի 27.10.2022թ գրությամբ՝ ի պատասխան ԹԻՀԿ հարցման:

[12] ՀՀ օրենքը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, 03.06.2021, https://www.arlis.am/documentview.aspx?docid=153756:

[13] Ֆոկուս-խմբային քննարկումներ, 2023թ. հուլիս-օգոստոս:

[14] ՀՀ օրենքը «Պետական տուրքի մասին», 27.12.1997, վերջին փոփ. 25.10.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=185711:

հայտարարագրման պահանջը անհարկի ձևականություն և լրացուցիչ բեռ է համարվում ՔՀԿ-ների համար: Նրանք սովորաբար որպես իրական շահառու են ներկայացնում իրենց գործադիր ղեկավարներին և/կամ հիմնադիրներին, որոնք արդեն իսկ գրանցված են պետռեգիստրում[15] (տե՛ս նաև Ոլորտ 8՝ «Պետության կողմից պաշտպանության պարտավորություն»):

Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- Իրավաբանական անձանց պետական ռեգիստրին՝ վերանայել գրանցման համար նախատեսված՝ կանոնադրության նմուշային օրինակը և մի քանի տարբերակ նախատեսել կազմակերպության որոշ առանձնահատկությունների կարգավորումների համար (օրինակ՝ ղեկավարման կառուցվածք, անդամավճար և այլն):
- ՀՀ արդարադատության նախարարությանը՝ հնարավորություն ընձեռել ՔՀԿ-ներին գրանցվել և իրենց գրանցման տվյալները փոփոխել էլեկտրոնային եղանակով:
- ՀՀ արդարադատության նախարարությանը՝ ոչ առևտրային կազմակերպությունների համար նախատեսել իրական շահառուների տվյալների անվճար փոփոխության հնարավորություն:
- Պետական եկամուտների կոմիտեին՝ արդիականացնել ՔՀԿ հաշվետվությունների էլեկտրոնային բազան՝ որոնման հնարավորություններ նախատեսելով ըստ մարզի, գործունեության ոլորտի և այլ չափորոշիչների, խթանել բազայի օգտագործումը՝ օրինակ, Պետական եկամուտների կոմիտեի կայքի գլխավոր էջում և այլ պետական մարմինների կայքերում հղում տեղադրելով:

3.2 Հավասար վերաբերմունք

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ **4.9 / 7**

Իրավական դաշտ՝ **5 / 7**	Գործնական դաշտ՝ **4.8 / 7**

ՔՀԿ-ների, ինչպես նաև ՔՀԿ-ների և տնտեսվարող սուբյեկտների միջև տարբերակման առումով պետության վերաբերմունքը 2022 թվականի համեմատ չի փոխվել: Գրանցման և հարկման օրենսդրության որոշ դրվագներ ավելի նպաստավոր են առևտրային կազմակերպությունների համար, թեպետ գործնականում ՔՀԿ-ները զգալիորեն ավելի քիչ են ենթարկվում հարկային ստուգումների: Իրավական կարգավորումները հավասար վերաբերմունք են ապահովում բոլոր ՔՀԿ-ների համար, սակայն որոշակի խտրական դրսևորումներ են արձանագրվել որոշումների կայացման գործընթացում ՔՀԿ-ներին ներգրավելու և ֆինանսավորում տրամադրելու գործելակերպում, մասնավորապես համայնքային մակարդակում: Հավասար վերաբերմունքի ոլորտի գնահատականները նույնն են մնացել 2022 թվականի համեմատ: Ինչպես և նախորդ զեկույցում, պետությանը

[15] Հարցազրույցներ և ֆոկուս-խմբային քննարկումներ, 2023թ. հուլիս-օգոստոս:

առաջարկվում է միջոցներ ձեռնարկել ՔՀԿ-ների և տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ համահավասար վերաբերմունք ապահովելու ուղղությամբ՝ առնվազն ՔՀԿ-ներին առցանց գրանցման հնարավորություն տալով:

Ոլորտի հիմնական բացահայտումներ

1) ***Գրանցման և հարկման վերաբերյալ օրենսդրության որոշ դրվագներ ՔՀԿ-ներին ավելի քիչ առավելություններ են տալիս, քան տնտեսվարող սուբյեկտներին:***

Տնտեսվարող սուբյեկտների գրանցումը ՔՀԿ-ների գրանցման համեմատ ավելի էժան է և արագ: Այս տարբերությունը պայմանավորված է լիազոր մարմնի կողմից ՔՀԿ-ների կանոնադրությունը մանրամասնորեն ուսումնասիրելու անհրաժեշտությամբ, եթե այն չի կազմվել ըստ օրենքով սահմանված նմուշի: ՔՀԿ-ների գրանցման պետական տուրքը 10000 ՀՀ դրամ է, մինչդեռ առևտրային ընկերությունների գրանցման համար տուրք չի գանձվում, իսկ անհատ ձեռնարկատերերը վճարում են 3000 ՀՀ դրամ: Բացի այդ, ի տարբերություն ՔՀԿ-ների և այլ իրավաբանական անձանց, ՍՊԸ-ները և անհատ ձեռնարկատերերը կարող են գրանցվել առցանց եղանակով:

Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս ՔՀԿ-ները առևտրային ընկերությունների համեմատ անբարենպաստ վիճակում են գտնվում: Ի տարբերություն ընկերությունների, ՀԿ-ները պարտավոր են աուդիտի հաշվետվություն ներկայացնել, եթե հանրային աղբյուրներից նրանց տարեկան եկամուտը գերազանցում է 10 միլիոն ՀՀ դրամը: Ուստի պետական գնումների մրցույթներին դիմելու դեպքում ՀԿ-ների նախահաշվարկում ավելանում է աուդիտի ծախսը:

2) ***Տեղական իշխանությունները ընտրողաբար են վերաբերում տեղական ՔՀԿ-ներին՝ որոշումները ընդունմանը մասնակցության և պետական աջակցություն տրամադրելու հարցերում:***

ՔՀԿ-ների միջև օրենքով սահմանված հատուկ տարբերակում չկա որոշումները ընդունմանը մասնակցության և պետական աջակցություն ստանալու հարցերում: Սակայն գործնականում, ըստ ՔՀԿ-ների, պաշտոնյաները անհավասար մոտեցում են ցուցաբերում, երբ խորհրդակցում են ՔՀԿ-ների հետ որոշումներ ընդունելիս, ինչը հատկապես դրսևորվում է մարզային և տեղական մակարդակում: Մասնավորապես՝ հանրային քաղաքականության վերաբերյալ քննարկումներում տեղական իշխանությունները կարող են անտեսել կամ չներառել այն ՔՀԿ-ներին, որոնք քննադատում են իրենց աշխատանքը: ՔՀԿ-ների ֆինանսավորումը տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) կողմից կարող է տրամադրվել ըստ հայեցողության՝ առանց թափանցիկ չափանիշների կիրառման[16] (տե՛ս նաև Ոլորտ 5՝ «Որոշումների ընդունման գործընթացին մասնակցելու իրավունք» և Ոլորտ 9՝ «Պետական աջակցություն»):

Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- ՀՀ արդարադատության նախարարությանը՝ հնարավորություն ընձեռել ՔՀԿ-ներին գրանցվել և գրանցման տվյալները թարմացնել էլեկտրոնային եղանակով:

[16] Հարցազրույցներ և ֆոկուս-խմբային քննարկումներ, 2023թ. հուլիս-օգոստոս:

3.3 Ֆինանսավորման մատչելիություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ **5.3 / 7**

Իրավական դաշտ՝ **5.8 / 7**	Գործնական դաշտ՝ **4.8 / 7**

Օրենսդրությունը թույլ է տալիս ՔՀԿ-ներին ֆինանսավորում հայցել, ստանալ և օգտագործել բոլոր օրինական աղբյուրներից: Սակայն այս հնարավորությունը լիարժեք չի օգտագործվում՝ նվիրաբերություններ հավաքագրելու և ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար խթանող մեխանիզմների պակասի պատճառով, ուստի ՔՀԿ-ների մեծ մասը ապավինում է դրամաշնորհներին: Միջազգային աղբյուրներից նվիրատվություններ, դրամաշնորհներ կամ բնաիրային աջակցություն ստանալու համար իրավական սահմանափակումներ չկան:

Աուդիտ իրականացնելու՝ օրենքով սահմանված պահանջը ազդեցություն է թողնում ֆինանսավորման մատչելիության վրա, քանի որ բազմաթիվ կազմակերպություններ ազատ միջոցներ չունեն աուդիտի ծախսերը հոգալու համար: Տարեկան շրջանառության սահմանված շեմը անցնելու դեպքում դրամաշնորհային ֆինանսավորումը ավելացված արժեքի հարկով (ԱԱՀ) հարկելու պահանջը մտահոգություններ է առաջացրել ՔՀԿ-ների շրջանում և կարող է գործնականում ֆինանսավորման մատչելիության սահմանափակում դառնալ: Այդ իսկ պատճառով ֆինանսավորման մատչելիության ոլորտի գնահատականները 2022 թվականի համեմատ վատթարացել են, իսկ աուդիտի պահանջի հետ կապված խնդիրները հասցեագրելու և ավելի բարենպաստ հարկային միջավայր ապահովելու վերաբերյալ առաջարկները արդիական են մնացել:

Ոլորտի հիմնական բացահայտումներ

1) ***Աուդիտի պահանջը ազդեցություն է թողնում ֆինանսավորման մատչելիության վրա:***

Հասարակական կազմակերպությունները հանրային միջոցների օգտագործման վերաբերյալ աուդիտորական եզրակացություն պետք է ներկայացնեն, եթե հաշվետու տարվա ընթացքում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից 10 միլիոն և ավելի ՀՀ դրամի չափով գումար են ստացել[17]: Հիմնադրամների համար աուդիտի պահանջը սահմանված է այն դեպքում, երբ հաշվետու տարվա ավարտին հիմնադրամի ակտիվների արժեքը գերազանցում է 10 միլիոն ՀՀ դրամը[18]: Աուդիտի իրականացումը սովորաբար ծախսատար է (սկսած 500000 դրամից), բայց այս ծախսը հազվադեպ է ներառվում դրամաշնորհային ծրագրերի բյուջեում, թեև շատ կազմակերպություններ ազատ միջոցներ չունեն այն հոգալու համար: Բացի այդ, աուդիտի պահանջը նվազեցնում է ՔՀԿ-ների մրցունակությունը պետական գնումների մրցույթներին մասնակցելիս, քանի որ նրանք ստիպված են այս ծախսը ներառել իրենց նախահաշվում:

[17] ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, վերջին փոփ. 14.06.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=183139, հոդված 26:

[18] ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, վերջին փոփ. 14.06.2023, https://www.arlis.am/documentview.aspx?docid=183143, հոդված 39:

2) *Հարկային կարգավորումները խնդիրներ են ստեղծում ՔՀԿ-ների՝ տեղական ու միջազգային աղբյուրներից ֆինանսավորման համար:*

Ոչ առևտրային կազմակերպությունները ինքնաբերաբար դառնում են 20% ԱԱՀ վճարող և պետք է ԱԱՀ գանձեն իրենց մատակարարած ապրանքների, իրականացրած աշխատանքի և մատուցած ծառայությունների համար, եթե նրանց իրացման շրջանառությունը տարվա ընթացքում գերազանցում է 115 միլիոն դրամը: Այս հարկը հաշվարկվում է միայն ԱԱՀ-ի շեմը գերազանցող մասով[19]: Այսինքն, այն դեպքում, երբ ՔՀԿ-ն գերազանցել է այս շեմը (անկախ նրանից, թե այդ եկամուտը ինչ աղբյուրներից է գոյացել, օրինակ՝ դրամաշնորհներից, նվիրատվություններից թե տնտեսական գործունեությունից), նրանք պետք է ԱԱՀ գանձեն իրենց ապրանքների, աշխատանքի ու ծառայությունների համար և իրականացնեն համապատասխան վճարումը: Ըստ ՀՀ հարկային օրենսգրքի՝ դրամաշնորհների ձևով հատուցմամբ ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը և ծառայության մատուցումը ևս ենթակա են ԱԱՀ-ով հարկման, թեև կարող են արտոնություններ տրամադրվել կառավարության համապատասխան որոշմամբ[20] (հարկ է նշել, սակայն որ օրենսդրությամբ «դրամաշնորհ» հասկացությունը սահմանված չէ): Կառավարության կողմից ստացած տեղեկատվության համաձայն՝ ԱԱՀ-ից ազատված են միայն անհատույց հիմքով մատուցված աշխատանքներն ու ծառայությունները, ինչպես նաև այն ծրագրերը, որոնք բարեգործական կարգավիճակ են ստացել կառավարության հատուկ որոշմամբ[21]: ՔՀԿ-ները մտավախություն ունեն, որ այս պահանջը կարող է ռիսկեր առաջացնել շրջանառության՝ 115 միլիոն դրամի շեմը գերազանցող կազմակերպությունների համար, որոնք ապավինում են դրամաշնորհային ֆինանսավորմանը, հատկապես այն դեպքերում, երբ նրանց ծրագրերը չեն համապատասխանում բարեգործական կարգավիճակի չափանիշներին: Սա նշանակում է, որ նրանք պետք է ԱԱՀ վճարեն բոլոր այն դրամաշնորհային միջոցների համար, որոնք ընթացիկ տարում գերազանցում են սահմանված շեմը, իսկ հաջորդ տարի արդեն՝ հարկման ենթակա բոլոր միջոցների համար՝ անկախ եկամտի չափից (քանի որ հաջորդ տարվա սկզբից կհամարվեն ԱԱՀ վճարող կազմակերպություն)[22]:

Հարկային միջավայրը չի խթանում ֆիզիկական անձանց և ընկերությունների նվիրատվությունները. կորպորատիվ նվիրատվությունների համար առկա արտոնությունները արդյունավետ չեն, իսկ անհատական նվիրատվությունները խթանող իրավական մեխանիզմներ չկան: Բնաիրային նվիրատվությունները հարկվում են ԱԱՀ-ով՝ բացառությամբ հատուկ դեպքերի (տե՛ս նաև Ոլորտ 9՝ «Պետական աջակցություն»):

Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ ապահովել, որ պետական մարմինները պարտադիր աուդիտի գումար նախատեսեն դրամաշնորհների և գնումների համար նախատեսված բյուջեում, ինչպես նաև քննարկել աուդիտի ենթակա գումարի շեմի բարձրացման հնարավորությունը՝ աուդիտի համար նախատեսված ծախսերը նվազեցնելու և գումարը դրամաշնորհային բյուջե ուղղելու նպատակով:

[19] ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016, վերջին փոփ. 25.10.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=185997, հոդված 59 և 63:
[20] ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016, հոդված 4 և 64:
[21] ՔՀԿ-ների հանդիպում կառավարության ներկայացուցիչների հետ, 2023թ. օգոստոս:
[22] Հարցազրույցներ, քննարկումներ ՔՀԿ չափիչի փորձագիտական խմբի անդամների հետ, 2023թ. օգոստոս:

- ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ սահմանել «դրամաշնորհ» հասկացությունը՝ հաշվի առնելով միջազգային առաջատար փորձը և խորհրդակցելով ՔՀԿ-ների հետ, և դրամաշնորհային ծրագրերը ու ոչ առևտրային գործունեության մյուս տեսակները չհամարել ձեռնարկատիրական գործունեություն:
- ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ ստեղծել ավելի բարենպաստ հարկային միջավայր, որը կբարելավի ՔՀԿ-ների հնարավորությունները տարբեր աղբյուրներից ֆինանսավորում և բնաիրային աջակցություն հայթայթելու գործում, ներառյալ անհատներից և տնտեսվարող սուբյեկտներից նվիրատվությունների ստացումը և ուղղակի ձեռնարկատիրական գործունեությունը:

3.4 Խաղաղ հավաքների ազատություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ **5.3** / 7

Իրավական դաշտ՝ **5.7** / 7	Գործնական դաշտ՝ **4.9** / 7

Հավաքների ազատությունը պաշտպանվում է ՀՀ օրենսդրությամբ՝ միջազգային չափորոշիչներին համահունչ կերպով: Յուրաքանչյուր ոք կարող է կազմակերպել խաղաղ հավաքներ և մասնակցել դրանց, և այս իրավունքը պետք է պատշաճ պաշտպանվի՝ անկախ այն բանից, թե որտեղ են կազմակերպվում հավաքները: Ըստ օրենքի՝ բացօթյա հանրային հավաքների կազմակերպիչները՝ հավաքին 100 հոգուց ավելի մասնակից ակնկալելու դեպքում, պետք է հավաքի մասին իրազեկեն համայնքապետարանին (հավաքի անցկացման օրվանից ոչ ուշ, քան յոթ օր առաջ): Ինքնաբուխ և շտապ հավաքների դեպքում նախնական իրազեկում ներկայացնելը պարտադիր չէ: Միաժամանակյա և հակադարձ ուղղվածությամբ հավաքների համար սահմանափակումներ չկան: Ըստ օրենքի՝ ոստիկանությունը պարտավոր է ցանկացած դեպքում աջակցել հավաքին, եթե հավաքը խաղաղ բնույթ ունի՝ անկախ իրազեկման պահանջի իրականացումից: Ոստիկանությունը կարող է դադարեցնել հավաքը միայն այն դեպքում, եթե այլ կերպ հնարավոր չէ կանխել այլ անձանց հիմնական իրավունքների կամ հանրության շահերի անհամաչափ սահմանափակումը:

Գործնականում բազմաթիվ դեպքեր են արձանագրվել, երբ պետությունը չի կարողացել երաշխավորել և պաշտպանել հավաքների ազատությունը: Խաղաղ հավաքների ազատության ոլորտի ընդհանուր գնահատականը 2022 թվականի համեմատ չի փոխվել, ընդ որում՝ հավաքի մասնակիցների հանդեպ ոստիկանների կողմից կիրառված բռնության նոր դեպքեր են գրանցվել, իսկ նախորդ տարիների նմանատիպ դեպքերի համար ոստիկանական ծառայողների նկատմամբ արդյունավետ պատժամիջոցներ չեն կիրառվել: Իրավախախտ ոստիկաններին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ՝ 2022 թվականի զեկույցի առաջարկները չեն իրականացվել և դեռևս արդիական են մնում:

Ոլորտի հիմնական բացահայտումներ

1) ***2023 թվականին արձանագրվել են ոստիկանության կողմից անհամաչափ ուժի կիրառման մի շարք դեպքեր, ինչպես նաև սոցիալական ցանցերում հավաքների հնարավոր մասնակիցներին ուղղված սպառնալիքներ:***

2023 թվականին մի շարք հավաքներ են կազմակերպվել քաղաքական, սոցիալական, իրավական և այլ հարցերի շուրջ: Քաղաքացիական նախաձեռնությունների և ՔՀԿ-ների հավաքները հիմնականում կազմակերպվել են Արցախում առկա իրավիճակի շուրջ՝ կոչ անելով միջազգային հանրությանը կոնկրետ քայլեր ձեռնարկել հրատապ խնդիրների լուծման համար: Ոստիկանության կողմից հավաքների ցրման և ապօրինի միջամտության մի քանի դեպքեր եղան 2023 թվականի սեպտեմբերին, երբ բողոքի ցույցեր կազմակերպվեցին ի արձագանք Արցախի վրա Ադրբեջանի հարձակման և Հայաստանի կառավարության՝ չմիջամտելու մասին հայտարարության: Մասնավորապես, արձանագրվել են ոստիկանների կողմից անմիջապես հավաքի մասնակիցների ուղղությամբ լուսաձայնային նռնակների արձակման, օրենքի խախտմամբ բերման ենթարկման, ծեծի և բռնության դեպքեր[23]:

Սեպտեմբերի վերջին ընդդիմության հանրահավաքի նախօրեին սոցիալական ցանցերում տեղ գտան իշխող կուսակցության անդամների և աջակիցների գրառումներ, որտեղ կոչ էր արվում զրկել սոցիալական աջակցությունից Արցախի այն բնակիչներին, որոնք կմասնակցեն հավաքներին[24]: Այս միջադեպը դատապարտվեց իրավապաշտպանների կողմից, սակայն կառավարության կողմից ձեռնարկված կարգապահական պատժամիջոցներ կամ այս տեղեկատվությունը հերքող հրապարակային հայտարարություններ չեղան: Զեկույցը գրելու պահին գործը գտնվում էր դատախազության վարույթում[25]:

2) ***Նախորդ տարիներին տեղ գտած՝ ոստիկանության կողմից բռնության դեպքերը պատշաճ կերպով չեն հետաքննվել ու պատժվել:***

2022 թվականին տեղի ունեցած՝ ուժի ոչ պատշաճ կիրառման դեպքերի համար որևէ ոստիկանի մեղադրանք չի առաջադրվել և ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվել, նույնիսկ այն դեպքերում, երբ ցուցարարների նկատմամբ բռնությունը արձանագրվել է տեսախցիկներով: Կիրառված պատժամիջոցները սովորաբար սահմանափակվում են միայն կարգապահական տույժերով[26]: Ոստիկանությունից ստացած տվյալների համաձայն՝ 2020-2022 թվականներին ոստիկանության կողմից տեղ գտած խախտումների հատկանիշներով հարուցվել է 92 կարգապահական վարույթ, որի արդյունքում 5 ոստիկան ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, և որևէ մեկը չի ենթարկվել

---

[23] Հայտարարություն սեպտեմբերի 19-ից մեկնարկած հավաքների վերաբերյալ, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան, 23.09.2023, https://armhels.com/2023/09/23/հայտարարություն-սեպտեմբերի-19-ից-մեկնա/:

[24] «Խաղաղ հավաքների ազատության մշտադիտարկում» (հուլիս-սեպտեմբեր 2023 թ.), Զեկույց, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան, 07.11.2023, http://armhels.com/2023/11/07/հավաքների-ազատության-մշտադիտարկում-4/:

[25] Հավաքներին մասնակցող «արցախցիներին օգնությունից զրկելու» կոչեր իշխանականներից. դատախազությունն ուսումնասիրություն է սկսել, Ազատություն ռադիոկայան, 02.10.2023, https://www.azatutyun.am/a/32619740.html:

[26] «Խաղաղ հավաքների ազատության մշտադիտարկում» (ապրիլ-հունիս 2023 թ.), Զեկույց, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, 21.07.2023, http://armhels.com/2023/07/21/հավաքների-ազատության-մշտադիտարկում-3/:

քրեական պատասխանատվության[27]: 2022 թվականի հավաքների ընթացքում ոստիկանության ծառայողների կողմից կատարված իրավախախտումների 18 դեպք ներկայումս քննության ընթացքում է[28]:

3) ***Օրենսդրությամբ ոստիկանական գործողությունների վերաբերյալ սահմանված են մի շարք կարգավորումներ, որոնք նախատեսվում է բարելավել:***

Օրենքը հստակ կարգավորումներ է սահմանում ոստիկանության կողմից ուժի, հատուկ միջոցների և հսկողության սարքերի կիրառման վերաբերյալ: Սակայն հավաքների ոստիկանական վերահսկման վերաբերյալ առանձին ենթաօրենսդրական ակտեր չկան: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերանայել հավաքների և այլ զանգվածային միջոցառումների ընթացքում ոստիկանության գործողությունները կանոնակարգող «Ոստիկանության մասին» և «Ոստիկանության զորքերի մասին» օրենքները՝ միջազգային չափորոշիչների և մարդու իրավունքների համապատասխանելի դարձնելու նպատակով, ինչպես նաև բարձրացնել ՀՀ ներքին գործերի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումների իրազեկվածությունը հավաքների ազատության վերաբերյալ և բարելավել հավաքների ընթացքում ոստիկանական գործողությունների՝ մարդու իրավունքների պաշտպանության վրա հիմնված պրակտիկան[29]:

Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- Իրավապահ մարմինները պետք է պատշաճ հետաքննություն ապահովեն և համարժեք պատժամիջոցներ կիրառեն այն ոստիկանների նկատմամբ, որոնք չարաշահել են իրենց լիազորությունները հավաքների ժամանակ ոստիկանության գործունեությունն իրականացնելիս:

3.5 Որոշումների ընդունման գործընթացում մասնակցության իրավունք

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ **4.9 / 7**

Իրավական դաշտ՝ **5.4 / 7**	Գործնական դաշտ՝ **4.3 / 7**

[27] ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 գործողությունների ծրագիր՝ հաստատված ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1674-Լ որոշմամբ, 28.09.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=183444:

[28] Տվյալները տրամադրվել են ոստիկանության կողմից 2023 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ՝ ի պատասխան ԹԻՀԿ հարցման:

[29] ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 գործողությունների ծրագիր՝ հաստատված ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1674-Լ որոշմամբ, 28.09.2023:

Օրենսդրությամբ մի շարք ինստիտուցիոնալ մեխանիզմներ են սահմանված քաղաքացիական հասարակությանը և հանրությանը որոշումների կայացման գործընթացում ներգրավելու նպատակով, որոնք ներառում են հանրային քննարկումների էլեկտրոնային հարթակը (e-draft), հանրային լսումները, խորհրդակցական մարմինները: 2023 թվականին առաջին անգամ օգտագործվեց քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենսդրական առաջարկ ներկայացնելու հնարավորությունը, որը սահմանված է ՀՀ Սահմանադրությամբ:

Ըստ օրենքի՝ օրենսդրական ակտերի նախագծերը ենթակա են պարտադիր հանրային քննարկման, բացառությամբ միջազգային պայմանագրերի վավերացման մասին օրենքի նախագծերի: Եթե կառավարություն է ներկայացվել հանրային քննարկում չանցած նախագիծ, ապա կառավարությունը կարող է վերադարձնել այն ներկայացնող մարմին: Սակայն պարտադիր հանրային քննարկման վերաբերյալ դրույթը խախտելու համար որևէ վարչական պատժամիջոց նախատեսված չէ: Բացի այդ, պարտադիր հանրային քննարկման դրույթը չի տարածվում խորհրդարանի հեղինակած նախագծերի և ռազմական ու արտակարգ դրությանն առնչվող իրավական ակտերի վրա:

Քաղաքականության իրականացման և մշտադիտարկման գործընթացներում մասնակցությունը ապահովող իրավակարգավորումներ չկան: Պետական քաղաքականության և ծրագրերի իրականացման, մշտադիտարկման ու գնահատման փուլերում ՔՀԿ-ներին ներգրավելու գործելակերպը սահմանափակ է և հաճախ կախված է ՔՀԿ-ների նախաձեռնողականությունից և դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերի առկայությունից:

Վերջին տարիներին հետընթաց է նկատվել տեղեկատվության մատչելիության հարցում: Պետական մարմինների կողմից հարցումներին պատասխանների տրամադրումը և տեղեկատվության հրապարակումը գործնականում հաճախ չեն համապատասխանում իրավական պահանջներին, իսկ օրենսդրությամբ «սահմանափակ տարածման ծառայողական տեղեկության» հասկացության ամրագրումը նոր ռիսկեր է ստեղծում տեղեկատվության հասանելիության համար:

Կառավարության կողմից մասնակցության ինստիտուցիոնալ նոր մեխանիզմներ նախատեսող գործողությունների ծրագրերի ընդունման շնորհիվ ոլորտի իրավական դաշտի և համապատասխանաբար ընդհանուր գնահատականի բարելավում է արձանագրվել: Առաջարկությունների մեծ մասը 2022 թվականի համեմատ մնացել է նույնը: Մասնավորապես, կառավարությանը առաջարկվում է ավելի արդյունավետ օգտագործել մասնակցության առկա գործիքները՝ բովանդակալից մասնակցություն ապահովելու նպատակով, ՔՀԿ-ներին ներգրավել որոշումների կայացման վաղ փուլերում (ինչպես նաև քաղաքականության մոնիտորինգի և իրականացման գործընթացներում), պատժամիջոցներ սահմանել մասնակցության պահանջը չկատարող պետական մարմինների նկատմամբ և մեխանիզմներ ստեղծել Ազգային ժողովում հեղինակած նախագծերի պարտադիր հանրային քննարկման համար:

Ոլորտի հիմնական բացահայտումներ

1) ***2023 թվականին քաղաքացիներն առաջին անգամ օգտվեցին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենսդրական առաջարկ ներկայացնելու հնարավորությունից:***

Ըստ ՀՀ Սահմանադրության՝ քաղաքացիները կարող են որոշում կայացնողներին օրենսդրական նախագծերի նախաձեռնություններ և հանրագրեր ներկայացնել: Մասնավորապես, ընտրական իրավունք ունեցող առնվազն հիսուն հազար քաղաքացու ստորագրությամբ կարելի է Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկել[30]: 2023 թվականին առաջին անգամ այսպիսի քաղաքացիական նախաձեռնություն մեկնարկեց: Նախաձեռնությամբ առաջարկվում է քրեականացնել Հայաստանի անունից Արցախը այլ պետության կազմում ճանաչելը և Հայոց ցեղասպանության ճանաչումից հրաժարվելը[31]: Նախաձեռնությունը ավելի քան 58000 ստորագրություն հավաքեց, և 2023 թվականի հոկտեմբերին առաջարկը խորհրդարան ներկայացվեց:[32]

2) ***Կառավարությունը քաղաքական կամք է ցուցաբերում մասնակցային մեխանիզմներն ու պրակտիկան բարելավելու ուղղությամբ, սակայն ՔՀԿ-ների մասնակցության և նրանց հետ համագործակցության հանդեպ դիրքորոշումները տարբեր են՝ կախված պետական կառույցից և քաղաքականության ոլորտից:***

2023 թվականի օգոստոսին կառավարությունը հաստատեց 2023-2025 թվականների ճանապարհային քարտեզը և արդյունքային շրջանակը 2022 թվականի մայիսին ընդունված «Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության» համար: Այս փաստաթղթերը լրացուցիչ գործողություններ են նախատեսում հանրային մասնակցության բարելավման ուղղությամբ, ներառյալ մասնակցային կառավարման մշտադիտարկման ու ընթացակարգերի սպասարկման ինստիտուցիոնալ մեխանիզմի ձևավորումը և մասնակցային կառավարման թվային ու անցանց գործիքների, կարգավորումների և մեխանիզմների բարելավումը, ինչպես նաև թիրախային ցուցանիշներ սահմանում բարեփոխումների վերաբերյալ հանրային իրազեկվածության և նախագծերի վերաբերյալ դիտարկումների ներառման վերաբերյալ[33]:

Դրական փոփոխություն է արձանագրվել նաև ԲԿԳ գործողությունների վերանայված ծրագրում, որը կառավարության կողմից հաստատվեց 2023 թվականի նոյեմբերին: Մասնավորապես, լրամշակված ծրագրով նախատեսվում է վարչապետի աշխատակազմում ստեղծել հատուկ ինստիտուցիոնալ ստորաբաժանում՝ մասնակցային կառավարման գործընթացներին նպաստելու նպատակով[34]: Կառավարությունը նաև պատրաստակամություն է հայտնել խորհրդակցել ՔՀԿ-ների հետ՝ հանրային մասնակցության և մասնակցային կառավարման բարելավմանն ուղղված հետագա քայլերի վերաբերյալ[35]:

---

[30] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143723, հոդված 109:

[31] Hayaqve: A Civil Legislative Initiative to Stop the Betrayal of Artsakh and Armenia's Future, The Armenian Weekly, 26.07.2023, https://armenianweekly.com/2023/07/26/hayaqve-a-civil-legislative-initiative-to-stop-the-betrayal-of-artsakh-and-armenias-future/.

[32] Զեկույցում ներառված ժամանակահատվածից հետո՝ 2023թ. դեկտեմբերի 5-ին, Ազգային ժողովը դեմ քվեարկեց օրինագիծը օրակարգ ընդունելու հարցի վերաբերյալ:

[33] ՀՀ կառավարության N 1367-Լ որոշումը ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 13-ի N 691-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին, 11.08.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=181429:

[34] ՀՀ կառավարության N 1958-Լ որոշումը ՀՀ կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի N 1568-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին, 09.11.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=185244:

[35] Արայիկ Հարությունյանի գլխավորությամբ տեղի է ունեցել «Մասնակցային կառավարման» թեմայով խորհրդակցություն, Հայաստանի Հանրապետության կառավարություն, 21.04.2023, https://www.gov.am/am/news/item/15535/:

ՔՀԿ-ները իշխանությունների հետ երկխոսության դրական դեպքեր են արձանագրում առանձին (օրինակ՝ ընտրական և աշխատանքային իրավունքների) ոլորտներում, թեև նշում են, որ հանրային քննարկումները պաշտոնյաների կողմից երբեմն դիտվում են որպես ձևականություն: ՔՀԿ-ների կարծիքը կարող է անտեսվել հատկապես այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են բնապահպանությունը, քաղաքաշինությունը, արդարադատության բարեփոխումները, քաղաքական և այլ զգայուն հարցերը[36]: ՔՀԿ-ները տեղեկատվության օգտակար աղբյուր են համարում Իրավական նախագծերի միասնական էլեկտրոնային e-draft հարթակը (որտեղ տեղադրվում են կառավարության նախաձեռնած նախագծերը և առաջարկներ են հավաքագրվում գրանցված օգտատերերից), սակայն հաճախ այն համարում են պարզապես մասնակցության իմիտացիա, քանի որ հարթակը օգնում է պետական մարմիններին ցանկացած նախագիծ դիտարկել որպես «հանրային քննարկում» անցած, նույնիսկ այն դեպքում, երբ նախագծի դիտումները քիչ են, մեկնաբանությունները հիմնականում քննադատական են կամ ընդհանրապես բացակայում են[37]:

ՔՀԿ-ները նշում են, որ խորհրդարանում ինստիտուցիոնալ մասնակցության պակաս կա, թեև անհատական մակարդակում որոշ պատգամավորներ բաց են քննարկումների համար[38]: Ազգային ժողովի կողմից հանրային քննարկումների և խորհրդարանական լսումների միջոցով ՔՀԿ-ների առաջարկները ներառելու դրական օրինակ են ՀՀ աշխատանքային օրենսգրքի փոփոխությունները և «Կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքը[39]: Ի տարբերություն դրա՝ բանակում կամավոր հիմունքներով կանանց պարտադիր ծառայության վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների նախագիծը ՔՀԿ-ների հետ չքննարկվեց, թեև կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններն իրենց մտահոգություններն էին հայտնել նախագծի վերաբերյալ և դեմառդեմ քննարկում պահանջել[40]:

3) Տեղական մակարդակում մասնակցության և երկխոսության փորձառությունը հաճախ կախված է տեղական ՔՀԿ-ների ակտիվությունից և համայնքային իշխանությունների վերաբերմունքից:

Տեղական իշխանությունները ժամանակ առ ժամանակ աջակցում և ներգրավում են տեղական ՔՀԿ-ներին: Սակայն ՔՀԿ-ները կարող են ճնշումների ենթարկվել և անտեսվել, եթե նրանք վերահսկող (watch-dog) նախաձեռնություններ են իրականացնում կամ քննադատում են իշխանություններին[41]: Հանրային մասնակցությունը մասնավորապես նախատեսված է համայնքային զարգացման ծրագրերի, տարեկան բյուջեի և սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ քննարկումների ձևաչափով: ԲԿԳ 2022-2024 գործողությունների ծրագրում ներառված հանձնառության հիման վրա մի քանի համայնքում մասնակցային բյուջետավորում է իրականացվել՝ քաղաքացիներին հնարավորություն տալով գաղափարներ առաջարկել տեղական բյուջեներից ֆինանսավորվող ծրագրերի համար և

---

[36] Հարցազրույցներ և ֆոկուս-խմբային քննարկումներ, 2023թ. հուլիս-օգոստոս:
[37] Հարցազրույցներ և ֆոկուս-խմբային քննարկումներ, 2023թ. հուլիս-օգոստոս, Խորհրդատվական խորհրդի հանդիպում, 2023թ. նոյեմբեր:
[38] Հարցազրույցներ և ֆոկուս-խմբային քննարկումներ, 2023թ. հուլիս-օգոստոս:
[39] Հարցազրույցներ, 2023թ. օգոստոս, Armenia: New law "On Volunteer Work" adopted, CSO Meter, 08.08.2023, https://csometer.info/updates/armenia-new-law-volunteer-work-adopted:
[40] Կանայք բանակում. արդյո՞ք երաշխավորում են անվտանգություն՝ առանց անվտանգային երաշխիքների, ԿՌԿ Հայաստան, https://womenofarmenia.org/hy/2023/06/21/կանայք-բանակում-արդյո՞ք-երաշխավորու/:
[41] Հարցազրույցներ և ֆոկուս-խմբային քննարկումներ, 2023թ. հուլիս-օգոստոս:

քվեարկել դրանց օգտին[42]: Բացի այդ, կառավարությունը մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգ է սահմանել, որը ներառում է ծրագրային առաջարկների ներկայացում և համայնքի անդամների ու տեղական ՔՀԿ-ների քվեարկությամբ ընտրություն[43]:

Այնուամենայնիվ, ՔՀԿ-ները և փորձագետները նշում են ՏԻՄ որոշումներում իրական մասնակցության և առաջարկների ներառման պակասի մասին: Բացի այդ, համայնքների խոշորացումից[44] հետո՝ բազմաթիվ համայնքներում ներհամայնքային տրանսպորտի բացակայության պայմաններում, հեռավոր բնակավայրերի բնակիչները դժվարանում են հասնել իրենց համայնքի կենտրոն՝ հանրային քննարկումներին ու լսումներին մասնակցելու համար[45]:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը քաղաքացիներին հնարավորություն է տալիս ստորագրահավաքի միջոցով համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ներառել՝ օրենքով սահմանված քանակով ստորագրություններ հավաքագրելու դեպքում: Սակայն այս հնարավորությունը հազվադեպ է օգտագործվում: 2023 թվականին տեղական մի ՔՀԿ ստորագրահավաք նախաձեռնեց Սպիտակ համայնքում ներհամայնքային տրանսպորտի հարցը ավագանու նիստի օրակարգ ներառելու համար[46]: Դրան ի պատասխան՝ համայնքի ղեկավարը քննադատել ու նախատել է համայնքների վարչական ղեկավարներին և հանրագիրը ստորագրած համայնքի անդամներին[47]:

4) ***ՔՀԿ-ները տեղեկատվության մատչելիության հետընթաց են արձանագրում վերջին տարիներին, իսկ հաշվի առնելով օրենսդրական վերջին փոփոխությունները՝ իրավիճակը կարող է ավելի վատթարանալ:***

Թեև 2022 թվականին Հայաստանը վավերացրեց «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան[48], գործնականում տեղեկատվության մատչելիությունը չի բարելավվել: Ինչպես և նախորդ տարիներին, պետական մարմինները և համայնքապետարանները հաճախ տեղեկատվությունը լիարժեք և ժամանակին չեն հրապարակում, իսկ հրապարակված տվյալները հիմնականում մեքենայի համար ոչ ընթեռնելի PDF ձևաչափ են ունենում: Ըստ ՔՀԿ-ների, տեղեկատվության հասանելիությունը ավելի է վատթարացել՝ հարցումների պատասխանները ուշացած են լինում, մերժվում են կամ կարող են ընդհանրապես չտրվել[49]:

---

[42] Armenia approves fifth OGP Action Plan 2022-2024, CSO Meter, 17.10.2022, https://csometer.info/updates/armenia-approves-fifth-ogp-action-plan-2022-2024.

[43] ՀՀ կառավարության N 1890-Ն որոշումը «ՀՀ համայնքներում մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ 2024 թվականի պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին», 02.11.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=184645:

[44] Հանրային կառավարման բարեփոխումների հիման վրա 2015 թվականից Հայաստանի 931 համայնք վերակազմավորվել է, որի արդյունքում բազմաթիվ համայնքներ խոշորացվել են՝ կազմելով ընդհանուր առմամբ 71 համայնք:

[45] Հարցազրույցներ և ֆոկուս-խմբային քննարկումներ, 2023թ. հուլիս-օգոստոս:

[46] ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», 07.05.2002, խմբ. 16.12.2016, վերջին փոփ. 25.10.2023, https://www.arlis.am/documentview.aspx?docid=185397, հոդված 14:

[47] Աղմկահարույց դեպքից հետո Սպիտակի համայնքապետը նոր պատմության մեջ է, Ազատություն, 09.06.2023, https://www.youtube.com/watch?v=VeIgN0rUcvQ:

[48] ՀՀ օրենքը «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» եվրոպայի խորհրդի կոնվենցիան վավերացնելու մասին», 23.03.2022, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=161489:

[49] Հարցազրույցներ և ֆոկուս-խմբային քննարկումներ, 2023թ. հուլիս-օգոստոս:

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի զեկույցի համաձայն՝ 2023 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում գրանցվել է տեղեկատվության ազատության իրավունքի խախտման 106 դեպք (համեմատության համար՝ 2022 թվականի նույն ժամանակահատվածում գրանցվել է 89 խախտում). Այս դեպքերից 14-ի դեպքում ՔՀԿ-ները և լրատվամիջոցները պատշաճ պատասխան ստանալու պահանջով դիմել են դատարան[50]: Սակայն հաշվի առնելով դատական ընթացակարգի տևողությունը ու առնչվող վարչարարությունը՝ այս գործընթացը համարվում է անարդյունավետ, և նույնիսկ հաջող ելքի դեպքում տրամադրված տեղեկատվությունը հաճախ կարող է հնացած կամ այլևս ոչ պիտանի լինել:

ՔՀԿ-ները տեղեկատվության հասանելիության առումով նոր խնդիրներ են ակնկալում՝ պայմանավորված «Պետական գաղտնիքի մասին» նոր օրենքի ընդունմամբ, որն ուժի մեջ կմտնի 2024 թվականից[51]: Օրենքը խիստ քննադատության է ենթարկվել ՔՀԿ-ների կողմից[52], մասնավորապես «սահմանափակ տարածման ծառայողական տեղեկության» հասկացության ներմուծման համար[53]: Նոր օրենքի ընդունման հետ միասին համապատասխան դրույթ է ներառվել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, որտեղ «սահմանափակ տարածման ծառայողական տեղեկությունը» ընդգրկվել է որպես տեղեկատվության հասանելիությունը սահմանափակող հիմքերից մեկը: Այս դրույթը արդեն իսկ ուժի մեջ է մտել 2023 թվականի ապրիլից[54]: ՔՀԿ-ները մտավախություն ունեն, որ պետական մարմինները չափազանց մեծ հայեցողություն կունենան՝ որոշելու, թե որ տեղեկատվությունը կարող է դասակարգվել որպես «սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություն» և ավելի հաճախ կմերժեն հարցումները[55]:

Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- Պետությանը՝ օգտագործել մասնակցության առկա ինստիտուցիոնալ մեխանիզմները և ապահովել բովանդակալից մասնակցություն, այդ թվում՝ ներգրավել ՔՀԿ-ներին քաղաքականության մշակման վաղ փուլերում, հասցեագրել e-draft հարթակի խնդիրները, բավարար ժամանակ տրամադրել խորհրդակցությունների համար, ավելի հաճախ դեմառդեմ քննարկումներ կազմակերպել, այդ թվում՝ մարզերում, հնարավորինս հաշվի առնել և ներառել ՔՀԿ-ների փաստահենք և հիմնավորված

[50] Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ԶԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2023թ. երրորդ եռամսյակային զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 24.10.2023, https://khosq.am/reports/հայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-35/:

[51] Այս նոր օրենքը 2024 թվականից կփոխարինի «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքին, տե՛ս ՀՀ օրենքը «Պետական գաղտնիքի մասին», 01.03.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=175793:

[52] Հայտարարություն, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 13.03.2023, https://khosq.am/2023/03/13/հայտարարություն-104/:

[53] «Սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություն» սահմանվել է որպես պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների շարքին չդասվող տեղեկություն, որի տարածումը կարող է բացասաբար անդրադառնալ Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը, ազգային անվտանգությանը, արտաքին հարաբերություններին, քաղաքական և տնտեսական շահերին, իրավակարգի պահպանությանը, տե՛ս ՀՀ օրենքը «Պետական գաղտնիքի մասին», 01.03.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=175793:

[54] ՀՀ օրենքը ««Տեղեկատվության ազատության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», 01.03.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=175809:

[55] Հարցազրույցներ և ֆոկուս-խմբային քննարկումներ, 2023թ. հուլիս-օգոստոս:

- Ազգային ժողովին՝ մեխանիզմներ նախատեսել պատգամավորների հեղինակած նախագծերի պարտադիր հանրային քննարկումներ իրականացնելու և իրավական նախագծերի վաղ փուլերում ՔՀԿ-ներին ներգրավելու համար:
- Կառավարությանը և Ազգային ժողովին՝ իրավական պատասխանատվություն նախատեսել հանրային խորհրդակցությունների և խորհրդակցական մարմինների վերաբերյալ դրույթները չկատարելու համար:
- Պետական մարմիններին՝ ժամանակին և լիարժեք արձագանքել ՔՀԿ-ների հարցումներին և ապահովել պաշտոնական կայքերում տեղեկությունների ժամանակին հրապարակումը և շարունակական թարմացումը:
- Ազգային ժողովին և կառավարությանը՝ օրենսդրությունից հանել «սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություն» հասկացությունը և չեղարկել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում 2023 թվականին ընդունված փոփոխությունները:
- Կառավարությանը՝ ընդլայնել ՔՀԿ-ների մասնակցությունը քաղաքականության իրականացման և մշտադիտարկման փուլերում՝ սահմանելով համապատասխան ինստիտուցիոնալ մեխանիզմներ և ապահովելով մասնակցությունը նաև օրենքների, քաղաքականությունների և ռազմավարությունների ընդունումից հետո:

3.6 Խոսքի ազատություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ **4.7 / 7**

Իրավական դաշտ՝ **5.2 / 7**	Գործնական դաշտ՝ **4.2 / 7**

Խոսքի ազատության և կարծիք արտահայտելու իրավունքը երաշխավորված է Սահմանադրությամբ և կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ որոշակի նպատակների նեղ շրջանակում: Օրենսդրության համաձայն՝ լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի ազատության և բազմակարծության սկզբունքների հիման վրա: Արգելվում է գրաքննությունը, լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը և խտրականությունը: Բացառությամբ հեռուստառադիոընկերությունների՝ լրատվամիջոցներն ազատ են իրենց գործունեությունն իրականացնել առանց գրանցման ու լիցենզավորման պահանջի:

Չնայած 2022 թվականին ստորագրված հուշագրին՝ իշխանությունները միշտ չէ, որ պահպանում են ստանձնած հանձնառությունը և վաղ փուլերում խորհրդակցում ՔՀԿ-ների հետ զանգվածային լրատվամիջոցների (ԶԼՄ) հետ կապված օրենսդրության վերաբերյալ: 2023 թվականին մշակված մի քանի նախագծերի դեպքում ՔՀԿ-ների հետ պատշաճ քննարկում չի կազմակերպվել:

Ինչպես նախորդ տարիներին, ապատեղեկատվության և կեղծ լուրերի դեմ պայքարի անհրաժեշտությունը դեռևս առաջնահերթություն է, հատկապես քաղաքական

լարվածության և սոցիալական բևեռացման բարձր մակարդակի պայմաններում: 2022 թվականին մեկնարկած՝ Ապատեղեկատվության դեմ պայքարի ազգային ռազմավարության շուրջ քննարկումները շարունակվում են, իսկ ռազմավարության ընդունումը նախատեսվում է մինչև տարեվերջ[56]:

2023 թվականին լրատվամիջոցների ներկայացուցիչների նկատմամբ ֆիզիկական հարձակումների ավելի քիչ դեպքեր են գրանցվել: Ինչպես և նախորդ տարիներին, զրպարտության ու վիրավորանքի հիմքով փոխհատուցման պահանջով բազմաթիվ դատական հայցեր են եղել, սակայն այս տարի այդ հայցերի քանակը և պահանջվող փոխհատուցման չափերը ավելացել են: Քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքի, ինչպես նաև բռնություն գործադրելու հրապարակային կոչերի և բռնությունը հրապարակային արդարացնելու կամ քարոզելու համար, իսկ պատժամիջոցները ներառում են տուգանքից մինչև ազատազրկում: 2023 թվականին մի քանի քրեական գործ է հարուցվել սոցիալական ցանցերում անհատների հրապարակումների համար. այդ գործերի օրինականությունն ու համաչափությունը հետագա քննության կարիք ունի:

Խոսքի ազատության ոլորտի ընդհանուր գնահատականը վատթարացել է՝ վիրավորանքի ու զրպարտության հիմքերով հարուցված դատական գործերի և սոցիալական ցանցերում հրապարակումների նկատմամբ իրավապահների ոչ հետևողական մոտեցման պատճառով: Այս ոլորտի առաջարկներում կառավարությանը կոչ է արվում ՔՀԿ-ների ու լրատվամիջոցների հետ խորհրդակցել ԶԼՄ-ների հետ կապված օրենսդրության մշակման վաղ փուլերում, ինչպես նաև հետևողական ու ոչ խտրական մոտեցում կիրառել ատելության խոսքի և բռնության կոչերի դեմ պայքարում:

Ոլորտի հիմնական բացահայտումներ

1) ***ԶԼՄ-ների հետ կապված օրենսդրության բարեփոխումներում ՔՀԿ-ների մասնակցությունը սահմանված է հուշագրով, սակայն լիարժեք չի իրականացվում:***

2022 թվականի ապրիլին 11 լրատվական կազմակերպությունների, համապատասխան խորհրդարանական հանձնաժողովի և ՀՀ արդարադատության նախարարության միջև Համագործակցության հուշագիր էր ստորագրվել, ըստ որի՝ իշխանությունները պարտավորվեցին ԶԼՄ-ների հետ կապված օրենսդրություն մշակելիս խորհրդակցել շահագրգիռ կողմերի հետ: Բացի այդ, համատեղ աշխատանքային խումբ ստեղծվեց՝ մեդիա ոլորտը կարգավորող օրենսդրության բարեփոխումների այնպիսի համապարփակ հայեցակարգ մշակելու նպատակով, որը հիմք կհանդիսանա հետագա քաղաքականության և օրենսդրական փոփոխությունների համար[57]: Հայեցակարգի շուրջ համատեղ աշխատանքները 2023 թվականին շարունակվել են, և ակնկալվում է, որ հայեցակարգը ավարտի կհասցվի 2024 թվականին:

Չնայած հուշագրի ստորագրմանը՝ 2023 թվականին մի քանի օրենսդրական նախաձեռնություններ եղան, որոնք պատշաճ կերպով չքննարկվեցին հանրության հետ: 2023 թվականի մարտին Ազգային ժողովը երկու փոփոխություն ընդունեց «Տեսալսողական

[56] Ապատեղեկատվության դեմ պայքարի ազգային ռազմավարությունը մինչև տարեվերջ պատրաստ կլինի, Առաջինի լրատվական ալիք, 04.05.2023, https://www.1lurer.am/hy/2023/05/04/Ապատեղեկատվության-դեմ-պայքարի-ազգային-ռազմավարությունը-մինչև-տարեվերջ-պատրաստ-կլինի/924846:
[57] Համագործակցության հուշագիր, 19 ապրիլի 2022թ., Երևան, https://www.moj.am/storage/files/news/news_5121033488291_Scan_2_.pdf:

մեդիայի մասին» ՀՀ օրենքում՝ կապված հանրային մուլտիպլեքսում ընդգրկված տեսալսողական հաղորդումների հեռարձակման և լիցենզավորման դրույթների հետ: Թեև փոփոխություններն ավելի շատ տեխնիկական բնույթ էին կրում և որևէ սահմանափակում չեն նախատեսել լրագրողների կամ լրատվական ընկերությունների համար, մեդիա ոլորտի կազմակերպությունները հայտարարեցին, որ այդ փոփոխություններն իրենց հետ չեն քննարկվել, մինչդեռ կան շատ ավելի հրատապ խնդիրներ, որոնք պետք է քննարկվեն և լրամշակվեն տվյալ օրենքում, օրինակ՝ լիցենզավորման մրցույթների հայտերի գնահատման պատշաճ թափանցիկության ապահովումը, որոշումների հիմնավորման նկատմամբ պահանջների խստացումը, մասնավոր հեռուստաընկերություններում ինքնակարգավորման մոտեցումների վերանայումը և այլն[58]:

Դրանից զատ, ՀՀ արդարադատության նախարարությունը հրապարակեց «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագիծ[59]: Ի թիվս այլ դրույթների՝ նախագծում ռազմական դրության ռեժիմի ժամանակ կարծիքի արտահայտման ազատության սահմանափակումների հնարավորություն նախատեսվեց, ներառյալ՝ լրագրողների հավատարմագրման հատուկ կարգի, կապի միջոցներից օգտվելու հատուկ կանոնների սահմանում, հեռուստատեսությամբ հեռարձակվող և համացանցի միջոցով տարածվող բովանդակության սահմանափակում, ՀՀ տարածքում ինտերնետային կայքերի, սոցիալական ցանցերի, ինտերնետային հավելվածների գործողության ժամանակավոր կասեցում (արգելափակում), ինչպես նաև ինտերնետ հասանելիության մասնակի կամ ամբողջական սահմանափակում: Խոսքի ազատության և տեղեկատվության մատչելիության ոլորտում աշխատող ՔՀԿ-ները խստորեն քննադատեցին այս նախագիծը[60]: Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը հաղորդագրություն հրապարակեց՝ նշելով, որ նախագծի իրավակարգավորումները մտահոգիչ են մարդու իրավունքների տեսանկյունից, մասնավորապես՝ կարող են հանգեցնել կարծիքի արտահայտման ազատության և տեղեկատվության մատչելիության իրավունքների անհամաչափ սահմանափակման[61]: ՀՀ արդարադատության նախարարությունը նշել է, որ նախագիծը կվերանայվի՝ հաշվի առնելով բարձրաձայնված մտահոգությունները[62]: Օրենսդրական փոփոխությունները հետագայում չքննարկվեցին և, ենթադրաբար, կչեղարկվեն[63]:

---

[58] Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ԶԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2023թ. առաջին եռամսյակային զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 21.04.2023, https://khosq.am/reports/հայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-33/:

[59] «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պաշտպանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծեր, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, https://www.e-draft.am/projects/5186/about:

[60] Հայտարարություն ռազմական դրության պայմաններում նախատեսվող սահմանափակումների վերաբերյալ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 12.01.2023, https://khosq.am/2023/01/12/հայտարարություն-103/:

[61] Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքը «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում առաջարկված փոփոխությունների նախագծի վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան, 29.12.2022, https://ombuds.am/am/site/ViewNews/2461:

[62] Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին օրենքում նախատեսվում են լրացումներ, Լուրեր, 09.01.2023, YouTube.com, https://www.youtube.com/watch?v=46iQV4rpmzM:

[63] Հարցազրույց, 2023 թ. օգոստոս:

2) ***2023 թվականին լրագրողների վրա հարձակումներն ավելի հազվադեպ են եղել, սակայն ավելացել են լրատվամիջոցների և լրագրողների դեմ դատական հայցերն ու կիրառված տուգանքները:***

Տարվա ընթացքում լրատվամիջոցների ներկայացուցիչների և լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնության ավելի քիչ դեպքեր են գրանցվել 2022 թվականի համեմատ: Սակայն բավականին շատ են եղել լրագրողների նկատմամբ զրպարտության ու վիրավորանքի հիմքով դատական հայցերը՝ հիմնականում քաղաքական գործիչների և պաշտոնյաների կողմից՝ առաջին կիսամյակում կազմելով 23 դեպք (2022 թվականի նույն ժամանակահատվածի 15 դեպքի համեմատ)։ Մոնիտորինգի արդյունքում 2023 թվականի հունվար-հունիս ամիսներին հայտնաբերվել է տարատեսակ ճնշումների 18 դեպք, որոնք հիմնականում զրպարտության և վիրավորանքի հիմքով դատական հայցեր են, ինչպես նաև ընդդիմադիր հայացքներ արտահայտող լրատվամիջոցներ ներկայացնող լրագրողների նկատմամբ անբարեհաճ վերաբերմունքի դրսևորման դեպքեր[64]:

2023 թվականի հայտնի դատական գործերից է Երևանի փոխքաղաքապետի (ներկայիս քաղաքապետի) հայցն ընդդեմ մի լրատվամիջոցի և դրա լրագրողի՝ պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող տեղեկությունների համար օրենքով սահմանված առավելագույն փոխհատուցման պահանջով: Դատարանը գործը վարույթ ընդունեց և բավարարեց լրագրողին ու լրատվամիջոցին պատկանող գույքի ու բանկային հաշիվների վրա՝ յուրաքանչյուր պատասխանողի դեպքում ինը միլիոն դրամի կալանք դրելու միջնորդությունը՝ առանց միջնորդության մասին պատասխանողներին տեղեկացնելու և առարկություններ ներկայացնելու հնարավորություն տալու: Լրատվամիջոցների կողմից սա մեկնաբանվեց որպես անհամաչափ և չհիմնավորված գործողություն, որի նպատակն էր զուտ պատժել և ճնշում գործադրել լրագրողի ու լրատվամիջոցի վրա[65]: Փոխքաղաքապետի միջնորդությամբ դատարանը հետագայում հանեց կալանքը[66]:

Երևանի ավագանու 2023 թվականի ընտրությունների նախընտրական քարոզարշավի ընթացքում իշխող կուսակցության կողմից ներկայացված դատական հայցի հիման վրա դատարանի կողմից 1 միլիոն դրամի կալանք դրվեց «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի բանկային հաշվին: Այս հայցը ներկայացվեց ՔՀԿ-ի կողմից արված մի հրապարակումից հետո, որտեղ նկարագրվում էր, թե ինչպես է կուսակցությունը քվեներ հավաքագրում այլ համայնքապետարանների աջակցությամբ[67]: Հետագայում դատարանի որոշմամբ ՔՀԿ-ի միջնորդությունը բավարարվեց և կազմակերպության հաշիվների վրա դրված արգելանքը հանվեց[68]:

---

[64] Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ԶԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2023թ. երկրորդ եռամսյակային զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 27.07.2023, https://khosq.am/reports/հայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-34/:

[65] Հայտարարություն, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 12.05.2023, https://khosq.am/2023/05/12/հայտարարություն-106/:

[66] Ավինյանը միջնորդել է վերացնել լրագրողի գույքի և դրամական միջոցների նկատմամբ կիրառված արգելանքը, Ազատություն ռադիոկայան, 16.05.2023, https://www.azatutyun.am/a/32413820.html

[67] Լրագրողական կազմակերպությունների համատեղ հայտարարությունը ՔՊ-ն ընդդեմ «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի գործով հայցի վերաբերյալ, Հանրային լրագրության ակումբ, 06.09.2023, https://pjc.am/lragroghakan-kazmakerputyunneri-hamategh-haytararutyune-qp-n-enddem-hk-i-gortsi-veraberyal/:

[68] «Քաղաքացիական պայմանագրի» համաձայնությամբ՝ վերացվեց Իրազեկ քաղաքացիների միավորման հաշիվների կալանքը, Առավոտ, 27.11.2023, https://www.aravot.am/2023/11/27/1385046/:

3) ***Բարձրաստիճան պաշտոնյաներին բացահայտ քննադատող քաղաքացիները ենթարկվում են հակասական վերաբերմունքի, բացի այդ, տպավորություն կա, որ իրավապահները ընտրովի վերաբերմունք են ցուցաբերում սոցիալական ցանցերում հաճախ հայտնվող ատելության խոսքի և բռնության կոչերի նկատմամբ:***

Արձանագրվել է երկու ուշագրավ դեպք, որոնք կապված են բարձրաստիճան պաշտոնյաների հասցեին անձնապես հնչած քննադատության հետ: Աղմկահարույց մի պատմություն եղավ, երբ քաղաքացին ԱԺ խոսնակին «դավաճան» անվանեց, որից հետո խոսնակը, հրահանգելով իր թիկնապահներին բռնի կերպով պահել այդ անձին, հայհոյեց և թքեց նրա վրա: Միջադեպը լայնորեն քննարկվեց հանրության մեջ և դատապարտվեց ՔՀԿ-ների կողմից[69]: Հետագայում մեկ այլ անձ ՀՀ վարչապետին տեսնելիս՝ նրան «դավաճան» անվանեց, որի հետո այդ անձին մեղադրանք առաջադրվեց խուլիգանության հիմքերով: Բացի այդ, մի շարք քրեական գործեր են հարուցվել սոցիալական ցանցերում հայտնված «ատելության խոսքի» և «բռնության կոչերի» ենթադրյալ դեպքերի հիման վրա: ՔՀԿ-ները հաճախ տպավորություն ունեն, որ այս դեպքերը բացահայտելիս և ենթադրյալ հանցանք կատարողներին հետապնդելիս՝ իրավապահները հիմնվում են ավելի շատ քաղաքական դրդապատճառների, քան արդար ու հետևողական մոտեցման վրա[70]: Առհասարակ, ըստ փորձագետների, պատժամիջոցներ կիրառելու փոխարեն պաշտոնյաները քննադատության նկատմամբ պետք է ավելի բարձր հանդուրժողականություն պահպանեն: Միևնույն ժամանակ, փորձագետները նշում են, որ դատարանի կողմից երկու կողմերի գործողությունների վերաբերյալ հիմնավորված իրավական եզրակացությունը կօգնի նախադեպ ստեղծել և ուղղորդել հետագա նման իրավիճակներում պաշտոնյաների գործողությունները և հասարակական կարծիքը[71]:

Թեև ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է սահմանում ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն ուղղված հրապարակային խոսքի համար[72], ատելության խոսքի սահմանման և ատելության խոսքի ու խոսքի ազատության սահմանազատման հետ կապված ավելի մանրամասն ուղղորդման կարիք կա: Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագիրը այս ուղղությամբ կոնկրետ միջոցառումներ է նախատեսում[73]:

Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- Պետությանը՝ պահպանել իր հանձնառությունը ԶԼՄ-ների հետ կապված օրենսդրության մշակման վաղ փուլերում ՔՀԿ-ների և լրատվամիջոցների հետ

---

[69] Հայտարարություն ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի վարքագիծը ԱԺ էթիկայի հանձնաժողովում քննելու պահանջով, Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 05.04.2023 https://transparency.am/hy/media/news/article/4878:

[70] Հարցազրույցներ և ֆոկուս-խմբային քննարկումներ, 2023թ. հուլիս-օգոստոս, Խորհրդատվական խորհրդի հանդիպում, 2023թ. նոյեմբեր:

[71] Հարցազրույցներ, 2023թ. օգոստոս:

[72] ՀՀ քրեական օրենսգիրք, 18.04.2003, վերջին փոփ. 25.10.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=185735, հոդված 229:

[73] ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագիր՝ հաստատված ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1674-Լ որոշմամբ, 28.09.2023:

խորհրդակցելու վերաբերյալ և ԶԼՄ-ների բարեփոխումների համակարգային մոտեցում կիրառել՝ հիմնվելով քաղաքացիական հասարակության հետ համատեղ մշակված հայեցակարգի վրա:

- Պաշտոնյաներին և այլ քաղաքական դերակատարներին՝ ավելի հանդուրժողական լինել քննադատության նկատմամբ և դիտարկել արտադատական մեխանիզմների (օրինակ՝ Տեղեկատվական վեճերի խորհուրդ կամ ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմին) դիմելու հնարավորությունը, իսկ իրավապահ մարմիններին՝ արդար և ոչ խտրական մոտեցում կիրառել ատելության խոսքի և բռնության կոչերի հիմքով քրեական գործեր հարուցելիս:

3.7 Մասնավոր կյանքի իրավունք

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ **4.9 / 7**

Իրավական դաշտ՝ **5.8 / 7**	Գործնական դաշտ՝ **3.9 / 7**

Մասնավոր կյանքի իրավունքը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ, սակայն օրենսդրության բարելավման կարիք կա՝ հաշվի առնելով նորագույն տեխնոլոգիաները և դրանց հետ կապված՝ անձնական տվյալների կառավարման և անվտանգության ռիսկերը: Հսկողության գործողությունների օրինականության նկատմամբ վերահսկողության պակասի պատճառով գործնականում պետության կողմից մասնավոր կյանքի իրավունքը պաշտպանելու կարողության վերաբերյալ որոշակի անվստահություն կա: Բացի այդ, ինչպես պետական ծառայողների, այնպես էլ հանրության շրջանում անձնական տվյալների կառավարման վերաբերյալ իրազեկվածության և կարողությունների պակաս է նկատվում, թեև տարեցտարի որոշակի դանդաղ առաջընթաց է արձանագրվել այս առումով: Մասնավոր կյանքի իրավունքի ոլորտի գնահատականը 2022 թվականի համեմատ չի փոխվել, նույնն են մնացել նաև առաջարկությունները՝ մասնավոր կյանքի իրավունքը պաշտպանելու նպատակով ապահովել տվյալների առավել անվտանգ պահպանումը և գործնականում հսկողության գործունեության վերաբերյալ օրենսդրական կարգավորումների իրականացումը՝ թափանցիկության ու հաշվետվողականության մեխանիզմների կիրառմամբ:

Ոլորտի հիմնական բացահայտումներ

1) ***Օրենսդրությունը երաշխավորում է մասնավոր կյանքի իրավունքը և պատշաճ պաշտպանությունը, սակայն գործնականում այս երաշխիքի ապահովման խնդիրներ են արձանագրվել:***

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը կարգավորում է անձնական տվյալները մշակելու, դրանց նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու կարգն

ու պայմանները[74]: Թեև այս օրենքը միջազգային իրավունքին համահունչ նպաստավոր դրույթներ է պարունակում, դրա կիրարկման ու վարչական պատասխանատվության գործիքակազմը թույլ է, ուստի գործնականում այս դրույթների կիրառումը համարժեք կերպով չի ապահովվում, և առկա են մասնավոր կյանքի իրավունքի խախտման դեպքեր՝ առանց պատասխանատվության ենթարկման բավարար մեխանիզմների: Անձնական տվյալների հետ առնվող իրավական ակտերը աստիճանաբար համապատասխանեցվում են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի դրույթներին, քանի որ անձնական տվյալներին վերաբերող բոլոր նոր իրավական ակտերը և փոփոխությունները պետք է համապատասխան փորձաքննություն անցնեն: Այնուամենայնիվ, տեխնոլոգիաների ներկայիս զարգացումների հետ կապված կարիքներին համապատասխանեցնելու համար օրենսդրության վերանայման ու բարելավման հետագա անհրաժեշտություն կա: Ինչպես և նախորդ տարիներին՝ փորձագետները նշում են, որ պետական հիմնարկների և գերատեսչությունների աշխատակիցների, ինչպես նաև ՔՀԿ-ների շրջանում անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ գիտելիքներն ու հմտությունները թերի են, թեև կարողությունների զարգացման միջոցառումների շնորհիվ որոշակի աստիճանական առաջընթաց կա: Օրինակ՝ ավելի շատ են այն դեպքերը, երբ պետական մարմինները հասկանում են, որ տվյալ որոշումը կարող է ազդեցություն ունենալ անձնական տվյալների հասանելիության վրա և խորհրդակցում են Անձնական տվյալների պաշտպանության գործակալության հետ՝ տվյալների պաշտպանության միջոցներ նախատեսելու համար[75]:

2) ***Հսկողության գործողությունները կարգավորվում են օրենքով, սակայն գործընթացի նկատմամբ վերահսկողության թափանցիկ և հաշվետու մեխանիզմներ չկան:***

Հսկողությունը կարող է իրականացվել միայն դատարանի որոշմամբ՝ բացառությամբ այն անհետաձգելի դեպքերի, երբ հապաղումը կարող է հանգեցնել ահաբեկչության կատարման կամ պետական անվտանգությանը սպառնացող գործողությունների: Նման դեպքերում Ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) կարող է հսկողություն իրականացնել մինչև 48 ժամվա ընթացքում՝ նախքան դատարանի որոշման տրամադրումը[76]: Փորձագետները և ՔՀԿ-ները կասկածներ ունեն գործնականում ԱԱԾ-ի ու իրավապահ մարմինների կողմից հսկողության լիազորությունների օգտագործման օրինականության վերաբերյալ, քանի որ հսկողության գործունեության օրինավորության վերահսկման և հաշվետվողականության մեխանիզմները բացակայում են, իսկ տվյալների արտահոսքի դեպքերի թափանցիկ քննություն չի իրականացվել, չկան նաև քաղաքացիական հասարակությանը հաշվետվողականության միջոցներ: ՔՀԿ-ներից մեկը, օրինակ, հարցում էր ուղարկել ԱԱԾ՝ պարզելու համար, թե անձնական տվյալների որ շտեմարաններն են հասանելի Ազգային անվտանգության ծառայությանը, սակայն հարցումը մերժվել է՝ այն հիմնավորմամբ, որ պահանջվող տեղեկությունը պետական գաղտնիք է[77]:

---

[74] ՀՀ օրենքը «Անձնական տվյալների պաշտպանության մասին», 18.05.2015, վերջին փոփ. 01.03.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175814, հոդված 5:

[75] Հարցազրույցներ, 2023թ. օգոստոս:

[76] ՀՀ օրենքը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին», 22.10.2007, վերջին փոփ. 16.12.2022, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=185410:

[77] Հարցազրույց, 2023թ. օգոստոս:

Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- Կառավարությանը՝ անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկել տվյալների անվտանգ պահպանման ուղղությամբ՝ մասնավոր կյանքի իրավունքը պաշտպանելու և տվյալների արտահոսքի որևէ հնարավորություն բացառելու նպատակով:
- Կառավարությանը՝ ապահովել, որ հսկողության գործողությունների վերաբերյալ օրենսդրության դրույթները գործնականում պահպանվեն՝ խախտումների դեպքում կիրառելով թափանցիկ և հաշվետու միջոցառումներ:

3.8 Պետության կողմից պաշտպանության պարտականություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ **4.5 / 7**

Իրավական դաշտ՝ **5.2 / 7**	Գործնական դաշտ՝ **3.8 / 7**

ՔՀԿ-ներն իրենց իրավունքները պաշտպանելու համար ունեն անհրաժեշտ իրավական մեխանիզմները և կարող են դատարանում հանրային շահերը ներկայացնել շրջակա միջավայրի խնդիրների և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտներում: Սակայն մի շարք բարդ նախապայմանների պատճառով գործնականում այս իրավունքի իրացումը զգալիորեն սահմանափակված է, հատկապես բնապահպանական հարցերի դեպքում: Կառավարությունը նախատեսում է ընդլայնել ՀԿ-ների՝ հանրային շահերը ներկայացնելու իրավունքը նաև այլ ոլորտներում, ինչը տարիներ շարունակ ՔՀԿ-ների պահանջն է եղել:

ՔՀԿ-ների և նրանց փոխկապակցված անձանց պաշտպանությունը բավարար չէ: Զգայուն ոլորտներում աշխատող ՔՀԿ-ները ենթարկվում են ճնշումների և սպառնալիքների: Մի քանի կազմակերպությունների և ակտիվիստների դեմ երրորդ անձանց կողմից դատական հայցեր են ներկայացվել, ինչը բացասաբար է անդրադարձել նրանց գործունեության և ռեսուրսների վրա:

2023 թվականին ուժի մեջ է մտել իրական շահառուների հայտարարագրման պահանջը ոչ առևտրային կազմակերպությունների համար: Բազմաթիվ ՔՀԿ-ների շրջանում անորոշություն կա առ այն, թե ով կարող է իրենց դեպքում համարվել իրական շահառու, և ում վերաբերյալ պետք է հայտարարագիր ներկայացնեն: Բացի այդ, ՔՀԿ-ները լրացուցիչ ծախսեր պետք է կատարեն՝ իրական շահառուների վերաբերյալ տվյալները փոփոխելու համար: Այս խնդիրների, ինչպես նաև զգայուն ոլորտներում աշխատող ՔՀԿ-ների հանդեպ շարունակվող հարձակումների պատճառով ոլորտի գնահատականները վատթարացել են: Հանրային շահերը դատարանում ներկայացնելու հնարավորության տրամադրումից զատ, առաջարկվում է չեղարկել իրական շահառուների հայտարարագրման պահանջի հետ կապված վճարները ոչ առևտրային կազմակերպությունների համար և միջոցներ ձեռնարկել ՔՀԿ-ներին ավելի արդյունավետ կերպով պաշտպանելու համար:

Ոլորտի հիմնական բացահայտումներ

1) ***ՀԿ-ները կարող են դատարանում հանրային շահերը ներկայացնել շրջակա միջավայրի պահպանության և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին վերաբերող հարցերով, սակայն գործնականում այս իրավունքի իրացման խնդիրներ կան:***

ՀԿ-ները կարող են դատարանում հանրային շահերը ներկայացնել շրջակա միջավայրի պահպանության և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներին վերաբերող հարցերով՝ պայմանով, որ դիմող կազմակերպությունը բավարարի մի շարք պայմանների[78]: Այս պահանջները խրթին են համարվում (օրինակ՝ պետք է ապացուցել, որ կազմակերպությունը մասնակցել է տվյալ հարցի հետ կապված հանրային քննարկումներին, կամ որ նրան նման հնարավորություն չի տրվել) և խոչընդոտում են այս իրավունքի գործնական իրացումը[79], հատկապես բնապահպանական կազմակերպությունների դեպքում: 2023 թվականին, օգտվելով 2022 թվականին օրենքով ընձեռված հնարավորությունից, հաշմանդամության իրավունքներով զբաղվող ՔՀԿ-ն դիմել է դատարան՝ հաշմանդամության իրավունքների վերաբերյալ հանրային շահերը ներկայացնելու համար: ՔՀԿ ներկայացուցչի խոսքով, դիմումի գործընթացը հարթ է անցել և ներկայացված փաստաթղթերի հիման վրա դատարանը վարույթ է ընդունել հայցադիմումը[80]:

ՔՀԿ-ների կողմից արդեն մի քանի տարի բարձրաձայնվող և քննարկվող առաջարկություններին համապատասխան՝ կառավարության կողմից 2023 թվականին հաստատված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության 2023-2025 թվականների գործողությունների ծրագրում նախատեսվել է ՀԿ-ների համար սահմանել դատարան դիմելու իրավունք հանրային նշանակության հարցերով՝ հաշվի առնելով *'actio popularis'* սկզբունքը[81]:

2) ***Վերջին տարիներին ՔՀԿ-ները և նրանց հետ կապված անձինք, հատկապես նրանք, ովքեր զբաղվում են ոլորտներում են աշխատում, ենթարկվում են ոտնձգությունների, ատելության խոսքի և հարձակումների:***

Իրավապաշտպան ու բնապահպանական ՔՀԿ-ները և ակտիվիստները, հատկապես նրանք, ովքեր զբաղվում են ԼԳԲՏ+ անձանց իրավունքների պաշտպանությամբ, երրորդ

---

[78] ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, հոդված 16, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, 05.12.2013, վերջ. փոփ. 26.06.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=180732, հոդված 216.6:

[79] Մասնավորապես, բնապահպանական խնդիրների դեպքում հայցը պետք է բխի կազմակերպության կանոնադրությամբ սահմանված նպատակներից, կազմակերպությունը պետք է մասնակցած լինի տվյալ հարցի հետ կապված հանրային քննարկումներին, կամ ապացուցի, որ նրան նման հնարավորություն չի տրվել, և վերջապես, հայցը ներկայացնելու պահին նախորդող առնվազն 2 տարվա ընթացքում ակտիվ գործունեություն ծավալած լինի շրջակա միջավայրի պահպանության ոլորտում: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում հայց ներկայացնելու համար անհրաժեշտ է, որ կազմակերպության կանոնադրությամբ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը սահմանված լինի որպես նպատակ, կազմակերպության անդամների պարզ մեծամասնությունը հաշմանդամություն ունեցող անձինք լինեն և հայց ներկայացնելու պահին նախորդող առնվազն երկու տարվա ընթացքում կազմակերպությունը գործունեություն ծավալի տվյալ ոլորտում:

[80] Էլեկտրոնային հաղորդակցություն ՔՀԿ ներկայացուցչի հետ, 2023թ. նոյեմբեր:

[81] ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագիր՝ հաստատված ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1674-Լ որոշմամբ, 28.09.2023:

անձանց կողմից սպառնալիքների և հարձակումների թիրախ կարող են դառնալ՝ բավարար պաշտպանություն չստանալով իրավապահների կողմից[82]: Հանքարդյունաբերական ընկերությունների կողմից բնապահպան ակտիվիստների դեմ մի շարք դատական գործեր են հարուցվել (հիմնականում զրպարտության և վիրավորանքի հիմքով), որոնք, ըստ ՔՀԿ-ների, նպատակ ունեն լռեցնել և կանխել բնապահպանական բողոքները: Օրինակ՝ 2023 թվականի հունվարին «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն զրպարտության հիմքով հայց է ներկայացրել ընդդեմ էկոակտիվիստ և լրագրող Թեհմինե Ենոքյանի՝ հրապարակային հերքում և 6 միլիոն դրամ փոխհատուցում պահանջելով: Հայցի պատճառ է դարձել ֆեյսբուքյան հրապարակումը, որտեղ Ենոքյանը կիսվել էր մեկ այլ աղբյուրի տեղեկատվությամբ: Այս հայցը հաջորդել է մեկ այլ հանքարդյունաբերական ընկերության հայցի հիման վրա 2022 թվականին կայացած՝ Վերաքննիչ դատարանի որոշմանը, ըստ որի՝ Ենոքյանին պարտավորեցրել են 1224000 ՀՀ դրամի չափով փոխհատուցում վճարել ընկերությանը[83]: Նման դեպքերը իրենց բացասական ազդեցությունն են թողնում քաղաքացիների վրա՝ հետ պահելով նրանց քաղաքացիական ակցիաներին մասնակցելուց[84] :

2022 թվականի հուլիսին ուժի մեջ մտած Քրեական օրենսգիրքը հանցանքը ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով կատարելը սահմանում է որպես պատասխանատվությունը կամ պատիժը ծանրացնող հանգամանք[85]: Սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը օրենսդրությամբ չի առանձնացված որպես լրացուցիչ պաշտպանության հիմք: Ինչպես նախորդ տարիներին, տրանսգենդեր և այլ ԼԳԲՏ+ անձանց վրա հարձակումներ են տեղի ունեցել, ինչը բացասական ազդեցություն է ունեցել նաև այս ոլորտում աշխատող ՔՀԿ-ների վրա: 2023 թվականի օգոստոսին տրանսգենդեր անձի դաժան սպանությունից հետո «Իրավունքի կողմ» ՀԿ-ի կողմից կազմակերպված՝ հիշատակի մոմավառության ժամանակ մասնակիցների վրա հարձակվեցին՝ ձվեր, շշեր, քարեր նետելով: Ըստ ՀԿ-ի վկայության՝ տարածքում գտնվող ոստիկանները չեն միջամտել[86]: Տարիներ շարունակ քննարկվող «Հավասարության ապահովման մասին» օրենքի նախագիծը, որի նպատակն է վերացնել խտրականությունը և Հավասարության խորհուրդ ստեղծել, որը պետք է պաշտպանություն ապահովի խտրականության բոլոր տեսակներից, դեռևս չի ընդունվել, սակայն նախատեսվում է 2024 թվականին այն լրամշակել և ներկայացնել որոշում ընդունողներին[87]:

ՔՀԿ-ները նշում են, որ Արցախում ստեղծված իրավիճակի շուրջ լարվածությունը բացասաբար է ազդել ՔՀԿ-ների մասին հանրային պատկերացումների վրա, քանի որ

---

[82] Ֆոկուս-խմբային քննարկումներ, հոկտեմբեր 2022թ.:

[83] Հայաստանում բնապահպանները ճնշումների են ենթարկվում. հայտարարություն, Panorama.am, 16.01.2023, https://www.panorama.am/am/news/2023/01/16/հայտարարություն-բնապահպաններ-ճնշում/2781830 :

[84] (Չ)լռեցնելով շարժումը / Silencing a Movement, ArmEcoFront, 23.12.2022, https://www.youtube.com/watch?v=ays_nghWRwU:

[85] ՀՀ քրեական օրենսգիրք, 18.04.2003, վերջին փոփ. 25.10.2023:

[86] Armenia: Attack against Right Side's vigil held in memory of a murdered transgender woman in Yerevan, Front Line Defenders, 25 August 2023, https://www.frontlinedefenders.org/sites/default/files/ua_armenia_right_side_250823_fv.pdf.

[87] ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագիր՝ հաստատված ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1674-Լ որոշմամբ, 28.09.2023:

սոցիալական ցանցերում խոսույթներ են տարածվել այն մասին, թե իբր ՔՀԿ-ները ներգրավված են «Արցախը հանձնելու» գործընթացում[88]: 2022 թվականի դեկտեմբերին դատարանը մերժեց իրավապաշտպան ՔՀԿ-ի հայցը՝ antifake.am կայքին ուղղված՝ հրապարակային հերքման և զրպարտության համար փոխհատուցման պահանջով: Այս կայքում մի խումբ ՔՀԿ-ներ մեղադրվում էին «օտարերկրյա շահը սպասարկելու, Նիկոլ Փաշինյանին իշխանության բերելու» ու «Արցախը հանձնելուն սատարելու» համար: Հետագայում ՔՀԿ-ն դիմեց Վերաքննիչ դատարան, սակայն 2023 թվականին դատարանը մերժեց բողոքարկումը: Այս գործի վերաբերյալ Տեղեկատվական վեճերի խորհուրդը (իրավաբանների և մեդիա փորձագետների ոչ պաշտոնական խորհրդատվական մարմին) եզրահանգում է հրապարակել, ըստ որի արդյունավետ դատական քննություն չի կատարվել, իսկ կազմակերպության սահմանադրական իրավունքները ոտնահարվել են[89]:

3) ***ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հետ կապված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՔՀԿ-ները բախվել են անորոշության և լրացուցիչ ֆինանսական բեռի:***

2021 թվականին ընդունված՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի հետ կապված օրենսդրական փոփոխություններով բոլոր իրավաբանական անձանց համար իրական շահառուների գրանցման պահանջ սահմանվեց: Ոչ առևտրային կազմակերպությունների համար այս պահանջն ուժի մեջ մտավ 2023 թվականից[90] (տե՛ս նաև Ոլորտ 1՝ «Միավորումների ազատություն»): Որոշ ՔՀԿ-ներ նշում են, որ իրենց համար հստակ չէ, թե ինչ տեղեկատվություն պետք է տրամադրեն, իսկ «իրական շահառու» հասկացությունը շփոթեցնող է: ՔՀԿ-ները վստահ չեն՝ արդյոք այս հասկացությունը վերաբերում է իրենց շահառուներին, ղեկավար մարմինների անդամներին, թե հիմնադիրներին: Առանձին ՔՀԿ-ներ մտահոգված են, որ կազմակերպությունների հիմնադիրների տվյալները միշտ չէ, որ հասանելի են, քանի որ նրանք գուցե լքել են կազմակերպությունը, հեռացել են երկրից կամ անգամ մահացել են[91]:

Իրական շահառուների առաջին հայտարարագիրը, ինչպես նաև յուրաքանչյուր տարի իրական շահառուների տվյալների հաստատումը անվճար է, սակայն տվյալների փոփոխության գրանցման համար անհրաժեշտ է վճարել 10000 դրամ, ինչը կարող է անհամաչափ ծախս դառնալ ՔՀԿ-ների համար:

Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- Ազգային ժողովին՝ օրենսդրական փոփոխություններ իրականացնել՝ ՔՀԿ-ներին հնարավորություն տալով հանրային շահերը ներկայացնել դատարանում՝ իրենց նպատակների շրջանակում, և ապահովել, որ նրանք կարողանան գործնականում օգտվել այս իրավունքից՝ մեղմելով չափազանց բարդ պահանջները և առնչվող վարչարարական ընթացակարգերը:
- Պետությանը՝ համարժեք պաշտպանություն ապահովել ՔՀԿ-ներին ուղղված ատելության խոսքից և հարձակումներից, այդ թվում՝ խտրականության դեմ մարմնի

[88] Հարցազրույցներ և ֆոկուս-խմբային քննարկումներ, 2023թ. հուլիս-օգոստոս:
[89] Գործ #95: «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ն ընդդեմ «Antifake.am» կայքի, Տեղեկատվական վեճերի խորհուրդ, 15.08.2023, https://idcarmenia.am/conclusion/95/:
[90] ՀՀ օրենքը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, 03.06.2021, https://www.arlis.am/documentview.aspx?docid=153756:
[91] Ֆոկուս-խմբային քննարկումներ, 2023թ. հուլիս-օգոստոս:

ստեղծման, հրապարակային հայտարարությունների և ողջամիտ ժամկետում ՔՀԿ-ների ու ակտիվիստների դեմ հարձակումների պատշաճ քննության միջոցով, ինչպես նաև SLAPP հայցերի դեմ օրենսդրական ու գործնական միջոցառումներ ձեռնարկելով:

- ՀՀ արդարադատության նախարարությանը և պետռեգիստրին՝ ոչ առևտրային կազմակերպություններից իրական շահառուների մասին տեղեկատվության փոփոխության համար վճար չգանձել:

3.9 Պետական աջակցություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ **4.1 / 7**

Իրավական դաշտ՝ **4.3 / 7**	Գործնական դաշտ՝ **3.9 / 7**

Պետական ֆինանսավորումը ՔՀԿ-ներին հատկացվում է հիմնականում մի քանի նախարարությունների կողմից՝ ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգի հիման վրա: Որպես կանոն, պետական ֆինանսավորման մեծ մասը տրամադրվում է սոցիալական, կրթական, մշակութային և սպորտային ծրագրերին: Դրամաշնորհային հայտերի ներկայացման համար օգտագործվում է պետական գնումների էլեկտրոնային հարթակը, սակայն ՔՀԿ-ներն այս հարթակը համարում են բարդ և տեխնիկական խնդիրներով լի: 2023 թվականին ՀՀ ֆինանսների նախարարությունը նախաձեռնել է մշակել պետական գնումների արդիականացված հարթակ, որը հատուկ մոդուլ կներառի դրամաշնորհային հայտերի համար:

Ի տարբերություն պետական մարմինների՝ ՏԻՄ-երը ՔՀԿ-ներին սահմանափակ ֆինանսավորում են տրամադրում, հաճախ հայեցողական հիմունքներով և առանց մոնիտորինգի ու հաշվետվողականության պահանջների:

ՔՀԿ-ները ազատված են հարկերից՝ անհատույց և անվերադարձ հիմքով ապրանքների մատակարարման, աշխատանքի կատարման և ծառայությունների մատուցման, ինչպես նաև բարեգործական ծրագրերի դեպքում: Ծրագրի բարեգործական կարգավիճակը սահմանվում է կառավարության համապատասխան հանձնաժողովի հատուկ որոշմամբ, սակայն այս գործընթացը երկարատև է ու բարդ: Բացակայում են ՔՀԿ-ների ձեռնարկատիրական գործունեության և անհատ նվիրատուների համար հարկային արտոնությունները, իսկ կորպորատիվ նվիրատուների համար որոշակի սահմանափակ արտոնություններ կան: 2023 թվականին ՔՀԿ-ները իշխանությունների հետ երկխոսություն նախաձեռնեցին դրամաշնորհների հարկման, բարեգործության խթանման և նվիրատվությունների համար հարկային արտոնությունների ընդլայնման վերաբերյալ:

Ոլորտի իրավական դաշտում բարելավում է արձանագրվել՝ պայմանավորված «Կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ, որը կարգավորումներ է նախատեսում կամավորության սահմանման և կամավորների իրավունքների վերաբերյալ: Պետական ու տեղական բյուջեից ֆինանսավորման թափանցիկությունն ու մրցունակությունը

բարելավելու և ՔՀԿ-ների ու նրանց նվիրատուների համար ավելի բարենպաստ հարկային միջավայր ստեղծելու վերաբերյալ նախորդ տարիների առաջարկները նույնն են մնացել:

Ոլորտի հիմնական բացահայտումներ

1) ***Պետական մարմինների կողմից ֆինանսավորումն իրականացվում է հիմնականում մրցութային հիմունքներով՝ էլեկտրոնային հարթակի միջոցով, սակայն ՔՀԿ-ներն այդ հարթակը խրթին են համարում:***

ՔՀԿ-ներին տրամադրվող ֆինանսավորումը հիմնականում իրականացվում է դրամաշնորհների ձևաչափով՝ մեկ տարվա ժամկետով, դրամաշնորհ տրամադրող մարմնի տարեկան բյուջեի հիման վրա: Պետական գնումների էլեկտրոնային armeps.am համակարգն օգտագործվում է դրամաշնորհային ծրագրերին դիմելու և դրամաշնորհների պայմանագրերի հրապարակման համար: Թեև ակնկալվում էր, որ հարթակը թափանցիկություն կապահովի և կօգնի խնայել այն ժամանակն ու ռեսուրսները, որոնք անհրաժեշտ կլինեին տպագիր ձևաչափով հայտերը ներկայացնելու համար (հատկապես մարզային կազմակերպությունների դեպքում), շատ ՔՀԿ-ներ հարթակը համարում են բարդ ու խրթին՝ լի տեխնիկական տերմիններով և պահանջներով, որոնք գործնականում հասու են միայն գնումների մասնագետներին[92]: Ֆոկուս-խմբային քննարկումներին մասնակցած մի քանի ՔՀԿ-ներ նշեցին, որ իրենք չեն կարողացել դիմել պետական դրամաշնորհների՝ գործընթացի բարդության պատճառով, կամ տեխնիկական խնդիրներ են ունեցել փաստաթղթերը ներկայացնելիս, որի հետևանքով իրենց հայտերը չեն դիտարկվել[93]: ՀՀ ֆինանսների նախարարությունը նախաձեռնել է պետական գնումների նոր էլեկտրոնային հարթակ՝ հատուկ մոդուլ նախատեսելով դրամաշնորհային մրցույթների համար, որը կօգնի լուծել ընթացիկ տեխնիկական խնդիրները: Նոր հարթակի տեխնիկական առաջադրանքի նախագիծը քննարկվել է ՔՀԿ-ների հետ[94]:

2) ***Հարկային օրենսդրությունը հիմնականում բարենպաստ չէ ՔՀԿ-ների համար, թեև նրանք օգտվում են մի շարք արտոնություններից:***

2023 թվականին ՔՀԿ-ները երկխոսություն սկսեցին կառավարության, մասնավորապես՝ ՀՀ վարչապետի գրասենյակի և ՀՀ ֆինանսների նախարարության հետ՝ դրամաշնորհները որպես ԱԱՀ-ով հարկման ենթակա եկամուտ համարելու վերաբերյալ իրենց մտահոգությունը արտահայտելու և հնարավոր լուծումներ գտնելու համար[95]: Ըստ Հարկային օրենսգրքի՝ ոչ առևտրային կազմակերպությունների անհատույց ստացած ակտիվները, աշխատանքները և ծառայությունները շահութահարկով հարկման ենթակա չեն: Սակայն ոչ առևտրային կազմակերպությունները իրենց ապրանքների և ծառայությունների համար պետք է ԱԱՀ գանձեն, եթե գործունեության բոլոր տեսակներից իրացման տարեկան շրջանառությունը գերազանցի 115 միլիոն ՀՀ դրամը: Ընդ որում, Հարկային օրենսգրքի համաձայն, դրամաշնորհների հատուցմամբ իրականացված

---

[92] Հարցազրույցներ և ֆոկուս-խմբային քննարկումներ, 2023թ. հուլիս-օգոստոս:
[93] Հարցազրույցներ և ֆոկուս-խմբային քննարկումներ, 2023թ. հուլիս-օգոստոս:
[94] Տեղի է ունեցել գնումների էլեկտրոնային համակարգի տեխնիկական առաջադրանքի նախագծի հանրային քննարկում, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, 19.05.2023, https://minfin.am/hy/content/teghi_e_unecel_gnumneri_elektronayin_hamakargi_tekhnikakan_arajadranqi_nakhagtsi_hanrayin_qnnarkum/:
[95] Արայիկ Հարությունյանի գլխավորությամբ տեղի է ունեցել «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հարկման ու աուդիտի հետ կապված խնդիրներ» թեմայով խորհրդակցություն, Հայաստանի Հանրապետության Կառավարություն, 07.08.2023, https://www.gov.am/am/news/item/15601/:

գործունեությունը նույնպես համարվում է աշխատանքների և/կամ ծառայությունների կատարում, ուստի կարող է ենթակա լինել ԱԱՀ-ով հարկման[96]:

Ըստ օրենքի, սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումը ազատվում են ԱԱՀ-ից համապատասխան միջկառավարական համաձայնագրերի շրջանակներում, ինչպես նաև այն դեպքում, եթե այդ ծրագրերի վերաբերյալ կառավարության և/կամ համապատասխան հանձնաժողովի կողմից համապատասխան որոշում է կայացվել: Հարկման ենթակա չեն հասարակական, բարեգործական և կրոնական կազմակերպությունների կողմից ապրանքների անհատույց մատակարարումը, աշխատանքների անհատույց կատարումը և (կամ) ծառայությունների անհատույց մատուցումը, օրենքով սահմանված կրթական և սոցիալական որոշ ծառայություններ[97]:

3) ***2023 թվականին ՔՀԿ-ները ջատագովություն են ծավալել բարեգործության համար ավելի նպաստավոր հարկային դաշտի վերաբերյալ, քանի որ առկա հարկային արտոնությունները բավարար չեն մեծածավալ և հաճախակի նվիրատվություններ խթանելու համար:***

«ՀԿ Կենտրոն» ՀԿ-ի նախաձեռնած քննարկումների շնորհիվ՝ պետության հետ երկխոսություն է ծավալվել բարեգործական նվիրատվությունների համար հարկային արտոնությունների շուրջ, և խորհրդարանի անդամները ստանձնել են հնչեցված խնդիրների ուղղությամբ օրենսդրական փոփոխությունների քննարկումը[98]: Ներկայումս նվիրատու կազմակերպությունների համար հարկային միայն մեկ արտոնություն կա, այն է՝ շահութահարկ վճարողների հարկման բազայից նվազեցվում է ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրված ակտիվների, դրանց համար կատարված աշխատանքների և (կամ) դրանց մատուցված ծառայությունների արժեքը, բայց ոչ ավելի, քան հարկային տարվա համախառն եկամտի 0,25 տոկոսը[99]: Ընկերությունների բնաիրային նվիրատվությունները հարկվում են ԱԱՀ-ով (եթե ԱԱՀ-ից ազատման մասին կառավարության հատուկ որոշում չկա), ընդ որում հարկի հաշվարկման բազան կազմում է նվիրաբերված ակտիվների արժեքի ութսուն տոկոսը[100]:

4) ***2023 թվականին ընդունվել է «Կամավոր աշխատանքի մասին» օրենքը, որի դրույթները հիմնականում նպաստավոր են ՔՀԿ-ների և կամավորների համար:***

ՀՀ օրենսդրությամբ երկար ժամանակ կամավորական գործունեության հստակ սահմանում և խրախուսման մեխանիզմներ նախատեսված չեն եղել: 2017 թվականից սկսած՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշակել է կամավորական

---

[96] ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016:
[97] ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016:
[98] ՀԿ-ների ներկայացուցիչները բարեգործության ոլորտի խնդիրներն արձանագրելու եւ համակարգելու նպատակով մշակել են փաստաթուղթ, որը ներկայացրել են ընդդիմադիր պատգամավորներին, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, 13.07.2023, http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=19152&year=2023&month=07&day=13&lang=arm&enc=utf8, Հայաստանում պետք է ձեւավորվի բարեգործություն իրականացնելու մշակույթ. աշխատանքային քննարկում ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, 13.11.2023, http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=19614&year=2023&month=11&day=13&lang=arm&enc=utf8 :
[99] ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016, հոդված 123:
[100] ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016, հոդված 62:

գործունեության մասին օրենքի մի քանի նախագծեր, որոնք ակտիվորեն քննարկվել են ՔՀԿ-ների մասնակցությամբ[101]: Նախագծի վերանայման մի քանի փուլերից և խորհրդարանական լսումներից հետո 2023 թվականի հունիսին «Կամավոր աշխատանքի մասին» օրենքը ընդունվեց Ազգային ժողովի կողմից և ուժի մեջ մտավ 2023 թվականի հոկտեմբերին: Օրենքով սահմանվում են կամավորության ու կամավորի իրավական հիմքերը, կամավոր աշխատանքից բխող լրացուցիչ ծախսերի փոխհատուցման իրավունքը, կամավորների առողջության և անվտանգության երաշխիքները և կամավորի իրավունքների պաշտպանությանն առնչվող այլ դրույթներ[102]: ԹԻՀԿ առաջարկությունների հիման վրա նախագծի վերջնական տարբերակում հանվել է նախորդ բոլոր իրավական նախագծերում առկա՝ ձեռնարկատիրական գործունեության մեջ կամավորներին ներգրավելու արգելքը:

Խնդրահարույց է նոր օրենքի այն դրույթը, որ կամավոր կարող է համարվել միայն նա, ով կազմակերպության հետ կամավոր աշխատանքի մասին պայմանագիր է ստորագրել: Ավելին, ըստ օրենքի, առանց պայմանագրի կամավոր աշխատանքում ներգրավվելու դեպքում տվյալ աշխատանքը համարվում է անօրինական, և կազմակերպությունը կարող է ենթարկվել տուգանքի: Միևնույն ժամանակ, օրենքում ներառված է «ակցիայի» մեկանգամյա կամ մշտական բնույթ չկրող միջոցառման հասկացությունը, և նշված է, որ կամավոր աշխատանքի մասին պայմանագիր կնքելը պարտադիր չէ ակցիային մասնակցելու դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ կամավոր աշխատանքը կատարվում է ոչ կազմակերպության միջոցով[103]:

Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- Կառավարությանը՝ ապահովել ֆինանսավորման թափանցիկ, մրցակցային և հաշվետու հատկացում ինչպես պետական, այնպես էլ տեղական մակարդակներում, այդ թվում՝ արդիականացնելով պետական դրամաշնորհների տրամադրման էլեկտրոնային հարթակը՝ ավելի սահուն ու արդյունավետ օգտագործելու համար:
- Ազգային ժողովին և կառավարությանը, մասնավորապես ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ ՔՀԿ-ների համար ավելի բարենպաստ հարկային միջավայր ստեղծել, որը կօգնի բարելավել տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ անհատների և տնտեսվարող սուբյեկտների նվիրատվություններից և ուղղակի ձեռնարկատիրական գործունեությունից ֆինանսավորում և բնաիրային աջակցություն հայթայթելու հնարավորությունները: Մասնավորապես.
  - դյուրինացնել բարեգործական գործունեությունը հարկերից ազատելու ընթացակարգերը՝ հնարավորություն ընձեռելով ժամանակին և արդյունավետ գործարքներ կատարել բարեգործական նպատակների համար,
  - տնտեսական գործունեությամբ զբաղվող ՔՀԿ-ների համար ավելի բարենպաստ հարկային ռեժիմ ապահովել՝ խրախուսելու ինքնաֆինանսավորման հասնելու նրանց ջանքերը,

[101] ՀՀ օրենքի նախագիծ «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին», Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, https://www.e-draft.am/projects/2516:
[102] ՀՀ օրենքը «Կամավոր աշխատանքի մասին», 14.06.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=18026:
[103] Լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս Armenia: New law "On Volunteer Work" adopted, CSO Meter, https://csometer.info/updates/armenia-new-law-volunteer-work-adopted, Supporting And Protecting Volunteer Work in Armenia, European Center for Not-For-Profit Law, https://ecnl.org/impact-story/supporting-and-protecting-volunteer-work-armenia:

- ավելի զգալի հարկային արտոնություններ տրամադրել անհատների և ընկերությունների նվիրատվությունների համար և ԱԱՀ-ից ազատել ՔՀԿ-ներին տրամադրվող բնաիրային նվիրատվությունները:

3.10 Պետություն-ՔՀԿ համագործակցություն

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ **4.0 / 7**

Իրավական դաշտ՝ **4.3 / 7**	Գործնական դաշտ՝ **3.6 / 7**

Պետություն-ՔՀԿ համագործակցության կամ ՔՀԿ-ների զարգացման վերաբերյալ առանձին քաղաքականություն կամ ռազմավարություն չկա Պետության և ՔՀԿ-ների միջև համագործակցությունը կարգավորվում է քաղաքականության մշակման գործընթացում մասնակցության վերաբերյալ օրենսդրությամբ և տարբեր խորհրդակցական մարմինների ու համատեղ խմբերի ստեղծման ու գործառնության մասին կառավարության որոշումներով: Բացի այդ, ՔՀԿ-ների հետ գործակցության և նրանց մասնակցության կարևորությունն արտացոլված է մի շարք ազգային ծրագրերում և ռազմավարություններում: ԹԻՀԿ նախաձեռնած բանակցությունների արդյունքում ՀՀ վարչապետի աշխատակազմը 2023 թվականին ՔՀԿ նպաստավոր միջավայրի առանձին բաղադրիչների շուրջ քննարկումներ է կազմակերպել:

Հանրային խորհուրդը, որը նախատեսված է ՀՀ Սահմանադրությամբ՝ որպես կառավարության խորհրդատվական մարմին, վերջին տարիներին ակտիվ չէ: Չնայած դրան՝ 2023 թվականին կառավարությունը օրենսդրական փոփոխություններ նախաձեռնեց՝ այս մարմնին նոր գործառույթներ վերապահելու համար: Առանձին գերատեսչություններին կից հասարակական խորհուրդներում և այլ խորհրդակցական մարմիններում ակտիվության ու արդյունավետության տարբեր միտումներ են նկատվում: 2023 թվականին նախարարներին կից հասարակական խորհուրդների գործունեության անկում է նկատվել, իսկ դրանց թափանցիկության և որոշումների կայացման վրա ազդեցության վերաբերյալ մտահոգությունները մնացել են:

Պետություն-ՔՀԿ համագործակցության ոլորտի ընդհանուր գնահատականը մնացել է նույնը, ինչ 2022 թվականին էր: Քաղաքացիական հասարակության հատվածի վերաբերյալ համապարփակ ռազմավարության մշակման և իրականացման վերաբերյալ նախորդ զեկույցի առաջարկը վերաձևակերպվել է, քանի որ կառավարության առաջարկով թիրախային քննարկումներ են նախաձեռնվել ՔՀԿ նպաստավոր միջավայրի առանձին հարցերի շուրջ: Խորհրդատվական մարմինների ներուժն ավելի արդյունավետ օգտագործելու և համատեղ աշխատանքային խմբերի ձևաչափով համագործակցությունն ընդլայնելու վերաբերյալ առաջարկները վերահաստատվել են:

Ոլորտի հիմնական բացահայտումներ

1) ***Հայաստանում պետության և ՔՀԿ-ների միջև համագործակցությունը ամրագրված չէ որևէ քաղաքականությամբ կամ ռազմավարությամբ: Հանրային***

բարեփոխումների ռազմավարության 2023-2025 թվականների ճանապարհային քարտեզը պետական մարմիններում հանրային մասնակցությունը խթանող ինստիտուցիոնալ միջոցառումներ է նախատեսում:

Թեև պետություն-ՔՀԿ համագործակցության վերաբերյալ առանձին քաղաքականություն կամ ռազմավարություն չկա, ՔՀԿ-ների հետ համագործակցության դրույթներ են ներառված տարբեր ազգային ռազմավարություններում և այն իրավական ակտերում, որոնք նախատեսում են բազմաշահառու խորհուրդների և համատեղ աշխատանքային խմբերի ստեղծում ու գործունեություն: 2023 թվականի օգոստոսին ընդունված՝ Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարության 2023-2025 թվականների ճանապարհային քարտեզը և արդյունքային շրջանակը նախատեսում են հանրային մասնակցային կառավարման մշտադիտարկման ու ընթացակարգերի սպասարկման ինստիտուցիոնալ մեխանիզմի ձևավորում և մասնակցային կառավարման թվային ու անցանց գործիքների բարելավում, ինչպես նաև թիրախային ցուցանիշներ սահմանում բարեփոխումների վերաբերյալ հանրային իրազեկվածության և նախագծերի վերաբերյալ դիտարկումների ներառման վերաբերյալ[104]:

Հիմնվելով «ՔՀԿ չափիչի» առաջարկների վրա՝ ԹԻՀԿ-ը հայաստանյան մյուս ՔՀԿ-ների հետ միասին շարունակել է քննարկումները պետական կառույցների հետ՝ ՔՀԿ-ների միջավայրի բարելավմանն ուղղված ճանապարհային քարտեզի նախագծի շուրջ: Կառավարության հետ պայմանավորվածության հիման վրա՝ քննարկումները շարունակվում են ճանապարհային քարտեզի առանձին բաղադրիչների շուրջ: Մասնավորապես, 2023 թվականին ՀՀ վարչապետի աշխատակազմը հանդիպումներ կազմակերպեց հանրային մասնակցության և ՔՀԿ-ների հարկման ու աուդիտի վերաբերյալ այն խնդիրների և առաջարկությունների շուրջ, որոնք ներկայացված էին ճանապարհային քարտեզի նախագծում[105]:

2) *Օրենքով նախատեսված են խորհրդակցական մարմիններ, որոնք սակայն ոչ միշտ են գործում:*

ՀՀ Սահմանադրությամբ առանձին դրույթ է նախատեսված Հանրային խորհրդի վերաբերյալ՝ որպես կառավարության խորհրդակցական մարմին[106]: Այս մարմնի գործառույթներն են՝ քաղաքականության մշակման և իրականացման գործում հասարակության տարբեր շերտերի շահերը ներկայացնելը, պետական կառավարման գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցությանը նպաստելը, հանրային նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքը

---

[104] ՀՀ կառավարության N 1367-Լ որոշումը «ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 13-ի N 691-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», 11.08.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=181429:

[105] Արայիկ Հարությունյանի գլխավորությամբ տեղի է ունեցել «Մասնակցային կառավարման» թեմայով խորհրդակցություն, Հայաստանի Հանրապետության կառավարություն, 21.04.2023, https://www.gov.am/am/news/item/15535/, Արայիկ Հարությունյանի գլխավորությամբ տեղի է ունեցել «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հարկման ու աուդիտի հետ կապված խնդիրներ» թեմայով խորհրդակցություն, Հայաստանի Հանրապետության Կառավարություն, 07.08.2023, https://www.gov.am/am/news/item/15601/:

[106] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, հոդված 161:

բացահայտելը[107]: Գործնականում Հանրային խորհրդի նախագահի՝ 2021 թվականի հունիսի հրաժարականից հետո այս մարմնի գործունեության մասին տեղեկություններ չկան[108]:

2023 թվականի օգոստոսին ՀՀ արդարադատության նախարարությունը «Հանրային խորհրդի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին նախագիծ է ներկայացրել հանրային քննարկմանը՝ առաջարկելով ստեղծել փաստահավաք խումբ, որը կուսումնասիրի 1991 թվականի սեպտեմբերից մինչև 2022 թվականը տեղի ունեցած դեպքերի և իրադարձությունների շրջանակում կամ դրանց հետևանքով տեղի ունեցած՝ մարդու իրավունքների խախտումները[109]: ՔՀԿ-ները քննադատել են փոփոխությունները՝ նշելով, որ փաստահավաք հանձնաժողովի առաջարկվող մոդելը չի ունենա անհրաժեշտ հանրային հեղինակությունը և անկախության երաշխիքները՝ իր գործունեության անաչառության և օբյեկտիվության ապահովման համար, ինչպես նաև անհրաժեշտ մանդատ, որպեսզի արդյունավետ կերպով իրագործի իր առջև դրված խնդիրները[110]:

2016 թվականից սկսած ստեղծվել են նախարարներին կից հասարակական խորհուրդներ[111]: Ըստ նախարարությունների կողմից ընդունված աշխատակարգերի, որտեղ սահմանված են հասարակական խորհրդի անդամների ընտրության, հանդիպումների պարբերականության և գործունեության թափանցիկության սկզբունքները, խորհուրդները պետք է կազմավորվեն թափանցիկ ձևով և նիստեր գումարեն առնվազն եռամսյակը մեկ անգամ: Գործնականում, ըստ նախարարությունների պաշտոնական կայքերում հրապարակված տեղեկատվության, 2023 թվականի օգոստոսի դրությամբ տասներկու նախարարություններից միայն երեքն են ընթացիկ տարվա ընթացքում հասարակական խորհրդի նիստ գումարել, որոնցից երկուսը՝ միայն մեկ նիստ[112]: Հակառակ սահմանված պահանջների՝ նախարարությունները ժամանակին ու լիարժեք չեն հրապարակում խորհուրդների նիստերի արձանագրությունները և գործունեության տարեկան հաշվետվությունները: Բացի այդ, բացակայում են հետադարձ կապի մեխանիզմները, որոնք թույլ կտան հետևել, թե որքանով են խորհրդի անդամների դիտարկումներն ու առաջարկները ներառվում որոշումների կայացման գործընթացում[113]: Հասարակական խորհուրդներին ՔՀԿ-ների մասնակցությունը սահմանափակող կարևոր խնդիր է մարզային կազմակերպությունների մասնակցության դժվարությունը, քանի որ նիստերն անցկացվում են Երևանում՝ առանց առցանց միանալու հնարավորության և ճանապարհածախսի փոխհատուցման:

ՀՀ վարչապետի, նախարարությունների և պետական այլ գերատեսչությունների, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի որոշումների հիման վրա վերջին տարիներին

---

[107] ՀՀ օրենքը «Հանրային խորհրդի մասին», 07.03.2018, վերջին փոփ. 09.06.2022, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=165007, հոդված 2:

[108] Հայաստանի Հանրապետության Հանրային խորհուրդ, https://publiccouncil.am/:

[109] ««Հանրային խորհրդի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ", Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, https://www.e-draft.am/projects/6153/about,

[110] Հանրային խորհրդին կից փաստահավաք հանձնաժողով ստեղծելու նախաձեռնության վերաբերյալ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, 11.09.2023, https://transparency.am/hy/media/news/article/4977:

[111] ՀՀ կառավարության թիվ 337-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», 31.03.2016: ՀՀ կառավարության թիվ 1552-Լ որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 22-ի թիվ 624-Լ որոշման մեջ լրացում կատարելու մասին», 27.12.2018, https://www.e-gov.am/gov-decrees/item/31320/:

[112] Աղբյուր՝ 12 նախարարությունների պաշտոնական կայքէջեր, որոնք ներկայացված են Հայաստանի Հանրապետության կառավարության կայքում, https://www.gov.am/en/structure/.

[113] Հարցազրույցներ, 2023թ. օգոստոս:

ձևավորվել են նաև այլ ոլորտային խորհուրդներ և հանձնաժողովներ: Այս խորհուրդների ակտիվությունն ու արդյունավետությունը կախված է համակարգող պետական մարմնից և ՔՀԿ-ների նախաձեռնողականությունից: Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը, որը ստեղծվել է վարչապետի հրամանագրով 2022 թվականին, ներառում է քվեարկելու իրավունք ունեցող երեք ՔՀԿ ներկայացուցչի և 2023 թվականին կանոնավոր նիստեր է գումարել, որոնք հանրությանը հասանելի էին ուղիղ հեռարձակմամբ[114]: Հիմնականում ակտիվ են նաև միջազգային տարբեր նախաձեռնությունների շրջանակում մասնակցային գործելակերպի հանձնառությունն ապահովելու նպատակով ստեղծված բազմաշահառու աշխատանքային խմբերը[115]: Ըստ կարիքի՝ համատեղ աշխատանքային խմբեր են ձևավորվում առանձին իրավական նախագծերի, ռազմավարությունների մշակման և իրականացման շուրջ՝ մասնակցություն ապահովելով համագործակցային մակարդակում: Վարչապետի որոշմամբ նոր աշխատանքային խումբ է ստեղծվել 2023-2026 թվականների Հակակոռուպցիոն ռազմավարության և գործողությունների ծրագրի մշակման նպատակով՝ ներառելով հինգ ՔՀԿ[116]: Այս խումբը մի քանի հանդիպում է ունեցել տարվա ընթացքում՝ ռազմավարության նախագիծը լրամշակելու նպատակով:

Ինչ վերաբերում է մարզպետարաններին և ՏԻՄ-երին կից խորհրդատվական մարմիններին, ապա ՔՀԿ-ները նշում են, որ դրանք շատ դեպքերում չեն գործում կամ հազվադեպ հանդիպումներ են ունենում, իսկ ՔՀԿ-ների ներդրումն ու առաջարկները հաշվի առնելու համար մեխանիզմներ չկան[117]:

Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- Կառավարությանը՝ ՔՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ քայլեր ձեռնարկել քաղաքացիական հասարակության նպաստավոր միջավայրը բարելավելու ուղղությամբ:
- Պետական մարմիններին՝ լիարժեք և արդյունավետ կերպով օգտագործել խորհրդակցական մարմինների ներուժը, մասնավորապես՝ նիստեր կազմակերպել օրենքով նախատեսված պարբերականությամբ, հեռավար մասնակցության հնարավորություն ընձեռել, բարելավել նրանց թափանցիկությունը և ապահովել ավելի լայն լիազորություններ ու հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմներ:
- Ազգային ժողովին և կառավարությանը՝ ավելի հաճախ օգտագործել համատեղ աշխատանքային խմբերի ձևաչափը՝ որպես քաղաքականության մասնակցային մշակման և իրականացման արդյունավետ գործիք:

---

[114] Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, https://moj.am/search/results/newsՍահմանադրական+բարեփոխումների+խորհուրդ, https://www.facebook.com/watch/mojarmenia/:

[115] Խմբի անդամներ, Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, https://ogp.gov.am/en/about-the-group/, ԲՇԽ-ի կազմ, Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն, https://www.eiti.am/hy/ԲՇԽ-ի-կազմ:

[116] Տեղի է ունեցել հակակոռուպցիոն ռազմավարության մշակման աշխատանքային խմբի անդրանիկ նիստը. Նախարարի տեղակալ Կարեն Կարապետյանը քննարկել է ռազմավարության հիմնական ուղղությունների վերաբերյալ տեսլականը, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, 06.03.2023, https://moj.am/article/3525:

[117] Ֆոկուս-խմբային քննարկումներ, 2023թ. հուլիս-օգոստոս:

3.11 Թվային իրավունքներ

Ոլորտի ընդհանուր գնահատական՝ **4.5 / 7**

Իրավական դաշտ՝ **4.9 / 7**	Գործնական դաշտ՝ **4.0 / 7**

Թվային իրավունքների պաշտպանությունը արտացոլված է խոսքի ազատության, մասնավոր կյանքի, տեղեկատվության ազատության և այլ իրավական կարգավորումներում: Հսկողության նպատակներով տեխնոլոգիաների օգտագործումը պատշաճ կերպով կարգավորվում է օրենքով և սահմանափակված է նպատակների նեղ շրջանակով: Այդուհանդերձ, արձանագրվել են դեպքեր, երբ գործնականում տեղի է ունեցել հեռախոսային և էլեկտրոնային հաղորդակցության ապօրինի հսկողություն:

Սոցիալական ցանցերն ազատորեն գործում են Հայաստանում: Գործում են մի շարք թվային հարթակներ, որոնք նպաստում են պետական մարմինների կողմից տնօրինվող տեղեկատվության հասանելիությանը, որոշումների ընդունմանը մասնակցելու և էլեկտրոնային եղանակով հարցումներ ու բողոքներ ներկայացնելու հնարավորություններ ընձեռում:

Կառավարությունը շարունակում է 2021-2025 թվականների թվայնացման ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացումը և 2023 թվականին մեդիա գրագիտության, համացանցի հասանելիության ընդլայնման և թվայնացման ստանդարտների խթանման ուղղությամբ մի շարք քայլեր է ձեռնարկել, որոնք որոշ չափով հասցեագրել են «ՔՀԿ չափիչ» 2022 թվականի զեկույցի առաջարկները: Սակայն թվային իրավունքների ոլորտի ընդհանուր գնահատականը չի փոխվել: Հսկողության տեխնոլոգիաների իրավաչափ օգտագործման վերաբերյալ առաջարկը մնացել է նույնը, բացի այդ, կառավարությանն առաջարկվում է ավելի ակտիվ քայլեր ձեռնարկել կիբերանվտանգության և անօրինական հսկողությունից պաշտպանության ուղղությամբ:

Ոլորտի հիմնական բացահայտումներ

1) ***Պետությունը սահմանափակումներ է նախատեսել հսկողության տեխնոլոգիաների կիրառման համար, սակայն ՔՀԿ-ները գաղտնալսումների օրինականության հետ կապված մտահոգություններ ունեն:***

Նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի գաղտնիության իրավունքը երաշխավորվում է ՀՀ Սահմանադրությամբ և համապատասխան օրենքներով՝ սահմանափակումների խիստ նեղ շրջանակով: Հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ, երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով[118]: Եթե հիմքեր կան կասկածելու, որ անձը հանցագործություն է կատարել, ապա քննիչները կարող են տեղեկատվություն պահանջել

[118] ՀՀ Սահմանադրություն, փոփ. 06.12.2015, հոդված 33:

տվյալ անձի հաղորդակցության վերաբերյալ՝ հսկող դատախազի հաստատմամբ[119]: Սա որոշակի մտահոգություններ է առաջացնում քաղաքացիական հասարակության և տեղեկատվական անվտանգության մասնագետների շրջանում, քանի որ ռիսկեր է պարունակում առանց դատական վերահսկողության անձի մասնավոր կյանքին, ներառյալ հաղորդակցության ազատությանը և առցանց անանունությանը անօրինական կամ անհամաչափ միջամտության առումով[120]:

Որոշ ՔՀԿ-ներ և փորձագետներ նշել են, որ չեն բացառում իրավապահների և ԱԱԾ-ի կողմից անիրավաչափ հսկողության հնարավորությունը: Բացի այդ, արձանագրվել են լրտեսական ծրագրերի օգտագործման դեպքեր՝ ինչպես պետության, այնպես էլ Հայաստանից դուրս գործող դերակատարների կողմից: 2022 թվականին Google ընկերությունը հաստատել էր Հայաստանի կառավարության կողմից Predator լրտեսական ծրագրերի օգտագործումը[121]: 2023 թվականին թվային իրավունքների ոլորտում գործող կազմակերպությունների և մասնագետների հետաքննության արդյունքում բացահայտվեց, որ մի քանի հայ լրագրողների և քաղաքացիական հասարակության գործիչների հեռախոսներ Pegasus լրտեսական ծրագրերի թիրախում են հայտնվել, ենթադրաբար՝ Ադրբեջանի կառավարության պատվերով[122]: Այս դեպքերին անդրադարձող հայտարարության մեջ Amnesty International կազմակերպությունը կոչ է արել արգելել խիստ ինվազիվ լրտեսական ծրագրերը[123]: Բացի այդ, մի քանի վերկայքերի, այդ թվում՝ լրատվամիջոցների և իրավապաշտպան կազմակերպությունների կայքերի վրա օտարերկրյա դերակատարների կողմից հարձակման մի շարք միջադեպեր են գրանցվել[124]: Սակայն իշխանությունները որևէ կերպ չարձագանքեցին կամ թափանցիկ միջոցներ չձեռնարկեցին՝ թվային իրավունքների պաշտպանությունը բարելավելու կամ պետական ու ոչ պետական կազմակերպությունների և ներկայացուցիչների կիբերանվտանգությունը պաշտպանելու ուղղությամբ:

2) ***Կառավարության կողմից մշակված օրենքի նախագիծը նախատեսում էր թվային իրավունքների մի շարք սահմանափակումներ, սակայն հետագայում այն սառեցվեց:***

ՀՀ արդարադատության նախարարությունը 2022 թվականի դեկտեմբերին հրապարակեց «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների նախագիծ, որը ռազմական դրության ռեժիմի ժամանակ հնարավորություն էր տալիս անհրաժեշտության դեպքում սահմանափակել հեռուստատեսությամբ հեռարձակվող և համացանցի միջոցով տարածվող բովանդակությունը, ժամանակավոր կասեցնել (արգելափակել) կայքերի, սոցիալական ցանցերի, ինտերնետային հավելվածների գործողությունը, ինչպես նաև ինտերնետ հասանելիության մասնակի կամ ամբողջական

---

[119] ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 30.06.2021, վերջ. փոփ.՝ 26.06.2023, հոդված 232, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=180734:

[120] Գևորգ Հայրապետյան,, առցանց անանունության իրավունքը Հայաստանում, Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ, Երևան, 2023, https://mdi.am/wp-content/uploads/2023/07/Color_for_web_G.Hayrapetyan_ARM.pdf:

[121] Protecting Android users from 0-Day attacks, Updates from Threat Analysis Group (TAG), 19.05.2022, https://blog.google/threat-analysis-group/protecting-android-users-from-0-day-attacks/.

[122] Hacking in a war zone: Pegasus spyware in the Azerbaijan-Armenia conflict, 25.05.2023, https://www.accessnow.org/publication/armenia-spyware-victims-pegasus-hacking-in-war/.

[123] Armenia/Azerbaijan: Pegasus spyware targeted Armenian public figures amid conflict, 25.05.2023, https://www.amnesty.org/en/latest/news/2023/05/armenia-azerbaijan-pegasus-spyware-targeted-armenian-public-figures-amid-conflict/.

[124] Freedom on the Net 2023: Armenia, Freedom House, https://freedomhouse.org/country/armenia/freedom-net/2023.

սահմանափակում իրականացնել[125]: ՔՀԿ-ների և այլ կազմակերպությունների բազմաթիվ քննադատական հայտարարություններից և շահագրգիռ կողմերի հետ դեմառդեմ քննարկումից հետո կառավարությունը սառեցրեց փոփոխությունների քննարկումը: Գործնականում 2023 թվականին կայքերի արգելափակում չի արձանագրվել:

3) ***Կառավարությունը, համագործակցելով ոլորտային փորձագետների և ՔՀԿ-ների հետ, մի շարք ինստիտուցիոնալ միջոցառումներ և գործողություններ է իրականացնում թվայնացման և թվային գրագիտության զարգացման ուղղությամբ:***

2021-2025 թվականների Հայաստանի թվայնացման ռազմավարությամբ և գործողությունների ծրագրով մի շարք միջոցառումներ են նախատեսվել ՀՀ կառավարության, տնտեսության և հասարակության թվային վերափոխման ուղղությամբ[126]: Ռազմավարության իրականացման շրջանակներում 2023 թվականին ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը՝ կառավարության կողմից 2022 հիմնադրված Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի և Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալության հետ համատեղ, մշակել և հրապարակել է հանրային ծառայությունների թվայնացման ուղեցույցը և սկզբունքները[127]:

2023 թվականի մարտին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հաստատեց «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» դպրոցական նոր առարկայի չափորոշիչը[128]: Չափորոշիչների մշակման և հետագա քայլերի իրականացման գործում նախարարությունը սերտորեն համագործակցել է «Մեդիա նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի հետ[129]:

ՔՀԿ-ների կողմից իրականացվում են փաստերի ստուգման մի շարք նախաձեռնություններ, որոնք ուղղված են նվազեցնելու կեղծ լուրերի տարածումը և իրազեկելու հանրությանը ապատեղեկատվության բացահայտման միջոցների վերաբերյալ[130]: ՔՀԿ-ների կողմից ստեղծվել են նաև թվային տվյալների և հարթակների առցանց բազաներ՝ բաց աղբյուրներից տեղեկատվության որոնումը դյուրինացնելու և էլեկտրոնային կառավարման ծառայությունների ու թվային այլ ռեսուրսների

---

[125] «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պաշտպանության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծեր, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, https://www.e-draft.am/projects/5186/about:

[126] ՀՀ կառավարության թիվ 183-Լ որոշումը «Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին», 11.02.2021, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149957:

[127] Թվայնացման ուղեցույց. Ինչպես ստեղծել Թվայնացման սկզբունքներին համապատասխան ծառայություններ, Ծառայությունների թվայնացման ուղեցույց, https://standards.hightech.gov.am/

[128] ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի N 30-Ն հրամանը հանրակրթական ուսումնական հաստատություններում «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկայի 2-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչը հաստատելու մասին, 30.03.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=176072:

[129] Մեդիա գրագիտություն, Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, https://mediainitiatives.am/medialiteracy-2/:

[130] Տե՛ս, օրինակ՝ Փաստերի ստուգման հարթակ, Իրազեկ քաղաքացիների միավորում, https://fip.am/, Փաստերի ռադար, Հանրային լրագրության ակումբ, https://pjc.am/landing/, Ստուգված է, media.am, https://media.am/hy/category/verified/, InFact/Փաստացի «Հետք» ՀԿ նախաձեռնած ֆեյսբուքյան խումբ, https://www.facebook.com/groups/pastatsi/:

հասանելիությունը բարելավելու համար[131]: ՔՀԿ-ները շարունակում են նաև թվային իրավունքների վերաբերյալ կրթության և մեդիա գրագիտության իրենց նախաձեռնությունները և ծրագրերը՝ նպատակ ունենալով լրացնել այս ոլորտում հանրային իրազեկման և մեդիա գրագիտության առկա բացը:

Ոլորտի կոնկրետ առաջարկությունները հետևյալն են.

- Կառավարությանը՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել կիբերանվտանգությունը բարելավելու և անօրինական լրտեսական ծրագրերից պաշտպանություն ապահովելու ուղղությամբ:
- Իրավապահ մարմինները պետք է ապահովեն հսկողության տեխնոլոգիաների իրավաչափ օգտագործումը և անձնական տվյալների արտահոսքի պատշաճ վերահսկողությունն ու քննությունը:

[131] Հայաստանի էլ. ռեսուրսների շտեմարան, Թվային Հայաստան, https://www.digital-armenia.am/:

IV. ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընդհանուր առմամբ, 2022 թվականի համեմատ 2023 թվականին Հայաստանի ՔՀԿ միջավայրում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել: Այնուամենայնիվ, հիմնվելով ՔՀԿ-ների և փորձագետների կողմից շեշտադրված առաջնահերթությունների վրա՝ առանձնացվել են զեկույցում ներկայացված առանձին ձեռքբերումներ ու խնդիրներ, որոնք հատուկ ուշադրության կարիք ունեն:

Որոշումների ընդունման գործընթացում մասնակցության իրավունքի ոլորտում բարելավում է արձանագրվել՝ ազգային ռազմավարություններում նախատեսված մի շարք միջոցառումների շնորհիվ: Սակայն այս միջոցառումների գործնական իրականացումը դեռևս ապագայի հարց է, իսկ խորհրդարանական նախագծերի պարտադիր հանրային քննարկման մեխանիզմների և ազգային ու տեղական մակարդակներում բովանդակալից մասնակցության խնդիրները հրատապ լուծման կարիք ունեն: Քաղաքականության մշակման վաղ փուլերում արդյունավետ մասնակցության մեխանիզմների բացակայությունը 2023 թվականին տեղեկատվության հասանելիության, խոսքի ազատության և թվային իրավունքների վերաբերյալ սահմանափակող օրինագծերի մշակման և ընդունման պատճառներից էր:

Պետական աջակցության ոլորտում բարելավում է նկատվել՝ պայմանավորված կամավորության մասին օրենքի ընդունմամբ: Սակայն պետական ֆինանսավորման և ՔՀԿ-ների ու նվիրատուների համար ավելի բարենպաստ հարկային դաշտի առումով առաջընթաց չի գրանցվել: Դրամաշնորհների մեկնաբանումը՝ որպես ծառայությունների դիմաց ստացած եկամուտ, հարկային միջավայրի և ֆինանսավորման առումով էլ ավելի մեծ մարտահրավեր է առաջադրում՝ հանգեցնելով ֆինանսավորման մատչելիության վատթարացմանը:

Թվային իրավունքների ոլորտում մեդիա գրագիտության և ապատեղեկատվության դեմ պայքարի միջոցառումների բարելավման վերաբերյալ առաջարկությունները մասամբ հաստատագրվել են, սակայն կիբերանվտանգության և անհարկի հսկողության վերաբերյալ մտահոգությունները մնացել են: Լրտեսող ծրագրերից պաշտպանության անհրաժեշտությունը կարևոր խնդիր է այս ոլորտում, իսկ ՔՀԿ-ների և ակտիվիստների պաշտպանությունը երրորդ կողմի հարձակումներից և խտրականությունից առաջնահերթություն է մնում պետության կողմից պաշտպանության պարտականության ոլորտում:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ 11 ոլորտներում ներկայացված 29 առաջարկությունների հանրագումարից որպես առաջնային են առանձնացվել հետևյալ յոթ առաջարկները.

1. ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ ապահովել, որ պետական մարմինները պարտադիր աուդիտի գումար նախատեսեն դրամաշնորհների և գնումների համար նախատեսված բյուջեում, ինչպես նաև քննարկել աուդիտի ենթակա գումարի շեմի բարձրացման հնարավորությունը՝ աուդիտի համար նախատեսված ծախսերը նվազեցնելու և գումարը դրամաշնորհային բյուջե ուղղելու նպատակով:

2. Պետությանը՝ օգտագործել մասնակցության առկա ինստիտուցիոնալ մեխանիզմները և ապահովել բովանդակալից մասնակցություն, այդ թվում՝ ներգրավել ՔՀԿ-ներին քաղաքականության մշակման վաղ փուլերում, հասցեագրել e-draft հարթակի խնդիրները, բավարար ժամանակ տրամադրել խորհրդակցությունների համար, ավելի հաճախ դեմառդեմ քննարկումներ կազմակերպել, այդ թվում՝ մարզերում, հնարավորինս հաշվի առնել և ներառել ՔՀԿ-ների փաստահենք և հիմնավորված առաջարկությունները:

3. Ազգային ժողովին՝ մեխանիզմներ նախատեսել պատգամավորների հեղինակած նախագծերի պարտադիր հանրային քննարկումներ իրականացնելու և իրավական նախագծերի վաղ փուլերում ՔՀԿ-ներին ներգրավելու համար:

4. Ազգային ժողովին՝ օրենսդրական փոփոխություններ իրականացնել՝ ՔՀԿ-ներին հնարավորություն տալով հանրային շահերը ներկայացնել դատարանում՝ իրենց նպատակների շրջանակում, և ապահովել, որ նրանք կարողանան գործնականում օգտվել այս իրավունքից՝ մեղմելով չափազանց բարդ պահանջները և առնչվող վարչարարական ընթացակարգերը:

5. Պետությանը՝ համարժեք պաշտպանություն ապահովել ՔՀԿ-ներին ուղղված ատելության խոսքից և հարձակումներից, այդ թվում՝ խտրականության դեմ մարմնի ստեղծման, հրապարակային հայտարարությունների և ողջամիտ ժամկետում ՔՀԿ-ների ու ակտիվիստների դեմ հարձակումների պատշաճ քննության միջոցով, ինչպես նաև SLAPP հայցերի դեմ օրենսդրական ու գործնական միջոցառումներ ձեռնարկելով:

6. Ազգային ժողովին և կառավարությանը, մասնավորապես ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ ՔՀԿ-ների համար ավելի բարենպաստ հարկային միջավայր ստեղծել, որը կօգնի բարելավել տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ անհատների և տնտեսվարող սուբյեկտների նվիրատվություններից և ուղղակի ձեռնարկատիրական գործունեությունից ֆինանսավորում և բնաիրային աջակցություն հայթայթելու հնարավորությունները: Մասնավորապես, անհրաժեշտ է դյուրինացնել բարեգործական գործունեությունը հարկերից ազատելու ընթացակարգերը, տնտեսական գործունեությամբ զբաղվող ՔՀԿ-ների համար ավելի բարենպաստ հարկային ռեժիմ ապահովել, ավելի զգալի հարկային արտոնություններ տրամադրել անհատների և ընկերությունների նվիրատվությունների համար և ԱԱՀ-ից ազատել ՔՀԿ-ներին տրամադրվող բնաիրային նվիրատվությունները:

7. Կառավարությանը՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել կիբերանվտանգությունը բարելավելու և անօրինական լրտեսական ծրագրերից պաշտպանություն ապահովելու ուղղությամբ:

V. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

«ՔՀԿ չափիչը» աջակցում է Արևելյան գործընկերության (ԱլԳ) երկրներում գործող ՔՀԿ-ների միջավայրի կանոնավոր ու հետևողական մոնիտորինգի իրականացմանը: Այն բաղկացած է 11 տարբեր ոլորտների չափորոշիչներից և ցուցանիշներից, որոնք օգտագործվում են իրավական և գործնական միջավայրի գնահատման նպատակով: Գործիքի մշակման հիմք են հանդիսացել միջազգային չափորոշիչները և ոլորտի առաջատար փորձը: «ՔՀԿ չափիչը» մշակվել է ECNL-ի և ԱլԳ վեց երկրների գործընկեր կազմակերպությունների փորձագետների հիմնական խմբի կողմից:

2020 թվականից սկսած՝ ECNL-ը համագործակցել է RESIS կազմակերպության մեթոդաբանության փորձագետների հետ՝ «ՔՀԿ չափիչի» մեթոդաբանությունը ձևափոխելով այնպես, որ հնարավոր լինի նպաստավոր միջավայրի տարբեր ոլորտների համար ինչպես որակական, այնպես էլ քանակական համեմատություն իրականացնել ԱլԳ տարբեր երկրների և տարիների միջև: Գնահատման մոդելի նախագիծը քննարկվել և փորձարկվել է տարածաշրջանի ընդլայնված փորձագիտական խմբի հետ՝ էլեկտրոնային փոստի և առցանց հանդիպման միջոցով: Համեմատության այս նոր մոդելի միջոցով մենք նպատակ ունենք՝ (1) գնահատել քաղաքացիական հասարակության միջավայրը 11 ոլորտներից յուրաքանչյուրում, (2) հետևել տարիների ընթացքում յուրաքանչյուր երկրի զարգացումներին/առաջընթացին և (3) համեմատել ՔՀԿ միջավայրի գնահատականները տարածաշրջանի մակարդակով:

Երկրի գործընկեր կազմակերպությունները փորձագիտական խմբի անդամ հանդիսացող այլ ՔՀԿ-ների հետ միասին իրականացրել են մոնիտորինգի գործընթացը և մշակել նկարագրական զեկույցը: Յուրաքանչյուր երկրում ստեղծվել է նաև Խորհրդատվական խորհուրդ, որը կազմված է հիմնական շահագրգիռ կողմերը ներկայացնող տեղացի փորձագետներից: Խորհրդի անդամներն ունեն երկու հիմնական խնդիր՝ վերանայել նկարագրական զեկույցը և զեկույցի տեքստի հիման վրա յուրաքանչյուր չափորոշիչի համար գնահատական սահմանել:

Տվյալ զեկույցը ներառում է 2023 թվականի հունվարից նոյեմբեր ընկած ժամանակահատվածը:

Մոնիտորինգի գործընթացը

Մոնիտորինգի իրականացման համար օգտագործվել են որակական մեթոդներ, այն է՝ փաստաթղթերի վերլուծություն, հարցազրույցներ և ֆոկուս-խմբային քննարկումներ: Փաստաթղթերի վերլուծության ընթացքում ուսումնասիրվել են համապատասխան իրավական ակտերը, ոլորտային զեկույցները, ԶԼՄ-ների և ՔՀԿ-ների հրապարակումները, պետական մարմիններին ուղարկված հարցումների պատասխանները: Քննարկումներ են եղել «ՔՀԿ չափիչ» ծրագրի փորձագիտական խմբի անդամների հետ: Հարցազրույցներ են իրականացվել 11 փորձագետի և ՔՀԿ-ների ներկայացուցիչների հետ:

Կազմակերպվել է երեք առցանց ֆոկուս-խմբային քննարկում՝ երևանյան և մարզային 23 ՔՀԿ-ների մասնակցությամբ, որոնք գործունեություն են ծավալում սոցիալական, կրթական, երիտասարդական, բնապահպանական, իրավապաշտպան, կարողությունների զարգացման, համայնքային զարգացման և այլ ոլորտներում: Հետազոտությանը

մասնակցած փորձագետների և ՔՀԿ-ների կողմից ներկայացված կարծիքները ներկայացուցչական չեն և չեն կարող ներառել ՔՀԿ միջավայրում առկա բոլոր մարտահրավերներն ու ձեռքբերումները: Այնուհանդերձ, մոնիտորինգի մասնակիցների կողմից ներկայացված խնդիրներն արտացոլել են Հայաստանի ՔՀԿ միջավայրի հիմնական զարգացումները և հնարավորինս լրացվել են տարբեր զեկույցների և վերլուծությունների օգնությամբ:

Զեկույցի նախագիծն ուսումնասիրվել է Հայաստանի Խորհրդատվական խորհրդի անդամների կողմից՝ էլեկտրոնային հաղորդակցության միջոցով, և քննարկվել 2023 թվականի նոյեմբերին կայացած հանդիպման ժամանակ: Խորհրդի անդամների առաջարկությունների հիման վրա վերանայվել և լրացվել են զեկույցի հիմնական բացահայտումները և առաջարկները:

Գնահատման գործընթացը

Հայաստանի հետազոտողները և Խորհրդատվական խորհրդի տասը անդամները գնահատել են **«ՔՀԿ չափիչ» գործիքի 11 ոլորտների բոլոր չափորոշիչները՝ օրենսդրական և գործնական դաշտում**: Գնահատման համար օգտագործվել է 7 բալանոց սանդղակ: Այնուհետև հաշվարկվել է յուրաքանչյուր չափորոշիչի վերջնական գնահատականը՝ մի բանաձևի հիման վրա, որտեղ 50 տոկոսով հաշվի են առնվել հետազոտողների գնահատականները և 50 տոկոսով՝ Խորհրդատվական խորհրդի անդամների գնահատականների թվաբանական միջինը: Յուրաքանչյուր ոլորտի միավորը հաշվարկվել է որպես բոլոր չափորոշիչների վերջնական գնահատականների թվաբանական միջին, ապա մոտարկվել մինչև մեկ տասնորդական նիշ՝ զեկույցում ներկայացնելու նպատակով:

Սանդղակի ծայրահեղ արժեքները համարվում են ծայրահեղ կամ իդեալական իրավիճակներ կամ միջավայր: Օրինակ, 1-ը ՔՀԿ-ների համար չափազանց անբարենպաստ (ավտորիտար) միջավայր է նշանակում, իսկ 7-ը՝ ծայրահեղ բարենպաստ (իդեալական ժողովրդավարական) միջավայր: «ՔՀԿ չափիչ» գործիքի, գնահատման գործընթացի և հաշվարկի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք https://csometer.info/:

VI. ՀՂՈՒՄՆԵՐ

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 05.07.1995, փոփ. 06.12.2015, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143723
- ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, 05.12.2013, վերջին փոփ. 26.06.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=180732
- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 05.05.1998, վերջին փոփ. 12.09.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=183874
- ՀՀ քրեական օրենսգիրք, 18.04.2003, վերջին փոփ. 25.10.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=185735
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, 06.12.1985, վերջին փոփ. 25.10.2023, https://www.arlis.am/documentview.aspx?docid=186004
- ՀՀ «Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենք, 16.12.2016, վերջին փոփ. 25.10.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=185339
- ՀՀ դատական օրենսգիրք, 07.02.2018, վերջին փոփ. 25.10.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=185754
- ՀՀ աշխատանքային օրենսգիրք, 09.11.2004, վերջին փոփ. 25.10.2023, hhttps://www.arlis.am/DocumentView.aspx?docid=185675
- ՀՀ հարկային օրենսգիրք, 04.10.2016, վերջին փոփ. 25.10.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=185997
- ՀՀ օրենքը «Անձնական տվյալների պաշտպանության մասին», 18.05.2015, վերջին փոփ. 14.06.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=183134
- ՀՀ օրենքը «Բարեգործության մասին», 08.10.2002, վերջին փոփ. 14.06.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=183142
- ՀՀ օրենքը «Զանգվածային լրատվության մասին», 13.12.2003, վերջին փոփ. 25.05.2022, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164454
- ՀՀ օրենքը «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», 08.07.2005, վերջին փոփ. 07.12.2022, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=172158
- ՀՀ օրենքը «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին», 03.04.2001, վերջին փոփ. 17.01.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=174073
- ՀՀ օրենքը «Կամավոր աշխատանքի մասին», 14.06.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=180260

- ՀՀ օրենքը «Հանրային խորհրդի մասին», 07.03.2018, վերջին փոփ. 09.06.2022, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=165007
- ՀՀ օրենքը «Հասարակական կազմակերպությունների մասին», 16.12.2016, վերջին փոփ. 14.06.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=183139
- ՀՀ օրենքը «Հավաքների ազատության մասին», 14.04.2011, վերջին փոփ. 05.10.2022, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=178234
- ՀՀ օրենքը «Հիմնադրամների մասին», 26.12.2002, վերջին փոփ. 14.06.2023, https://www.arlis.am/documentview.aspx?docid=183143
- ՀՀ օրենքը «Նորմատիվ իրավական ակտերի մասին», 21.03.2018, վերջին փոփ. 01.03.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=175854
- ՀՀ օրենքը «Ոստիկանության մասին», 16.04.2001, վերջին փոփ. 14.06.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=180286
- ՀՀ օրենքը «Պետական գաղտնիքի մասին», 01.03.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=175793
- ՀՀ օրենքը «Պետական տուրքի մասին», 27.12.1997, վերջին փոփ. 25.10.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=185711
- ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», 07.05.2002, խմբ. 16.12.2016, վերջին փոփ. 25.10.2023, https://www.arlis.am/documentview.aspx?docid=185397
- ՀՀ օրենքը «Տեղեկատվության ազատության մասին», 23.09.2003, վերջին փոփ. 01.03.2023, https://www.arlis.am/documentview.aspx?docid=175858
- ՀՀ օրենքը «Տեսալսողական մեդիայի մասին», 16.07.2020, վերջին փոփ. 25.10.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=185695
- ՀՀ օրենքը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին», 26.05.2008, վերջին փոփ. 25.10.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=185525
- ՀՀ օրենքը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին», 22.10.2007, վերջին փոփ. 16.12.2022, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=185410
- ՀՀ կառավարության N 1568-Լ որոշումը ««Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության 2022-2024 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», 06.10.2022, փոփ. 09.11.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=185253
- ՀՀ կառավարության N 691-Լ որոշումը «Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությունը, 2022-2024 թվականների ճանապարհային քարտեզը և արդյունքային շրջանակը, ռազմավարության իրականացման հսկողությունն ու համակարգումն ապահովող անձանց ցանկը հաստատելու մասին», 13.05.2022, փոփ. 11.08.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=181462
- ՀՀ կառավարության թիվ 1146-Ն որոշումը «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու և Հայաստանի

Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի թիվ 296-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», 10.10.2018, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=126002

- ՀՀ կառավարության թիվ 1204-Ն որոշումը «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին», 15.10.2015, վերջ. փոփ. 26.11.2020, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=147567
- ՀՀ կառավարության թիվ 1552-Լ որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 22-ի թիվ 624-Լ որոշման մեջ լրացում կատարելու մասին», 27.12.2018, https://www.e-gov.am/gov-decrees/item/31320/
- ՀՀ կառավարության թիվ 1890-Ն որոշումը «ՀՀ համայնքներում մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ 2024 թվականի պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին», 02.11.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=184645
- ՀՀ կառավարության թիվ 183-Լ որոշումը «Հայաստանի թվայնացման ռազմավարությանը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին», 11.02.2021, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149957
- ՀՀ կառավարության թիվ 1937-Ն որոշումը «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին», 24.12.2003, վերջին փոփ. 06.08.2021, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=155096
- ՀՀ կառավարության թիվ 1674-Լ որոշումը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությանը և դրանից բխող 2023-2025 թթ. գործողությունների ծրագիրը հաստատելու վերաբերյալ), 28.09.2023, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=183444
- ՀՀ կառավարության թիվ 66-Ն որոշումը «Բարեգործական ծրագրերի մասին», 16.01.2003, վերջին փոփ. 31.01.2019, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=128100
- ՀՀ կառավարության թիվ 810-Ն որոշումը «Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օգտագործվող հատուկ (մշակված, ծրագրված, հարմարեցված) տեխնիկական միջոցների ցանկը հաստատելու մասին», 31.07.2008, https://www.arlis.am/documentview.aspx?docID=45845
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրամանը հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության օրինակելի ձևը, հրապարակման և ներկայացման կարգը հաստատելու և ՀՀ պետական

եկամուտների կոմիտեի նախագահի 2019 թվականի փետրվարի 15-ի թիվ 102-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին, 27.05.2020, վերջին փոփ. 09.08.2022, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=168826

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ

- Ապատեղեկատվության դեմ պայքարի ռազմավարություն 2023-2025 (նախագիծ), http://www.foi.am/u_files/file/DOCs%202022/Strategy-against-Disinformation-Final-ARM-2023-2025.pdf
- «Խաղաղ հավաքների ազատության մշտադիտարկում» (ապրիլ-հունիս 2023 թ.), Զեկույց, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, 21.07.2023 թ., http://armhels.com/2023/07/21/հավաքների-ազատության-մշտադիտարկում-3/
- «Խաղաղ հավաքների ազատության մշտադիտարկում» (հուլիս-սեպտեմբեր 2023 թ.), Զեկույց, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, Երևան, 07.11.2023 թ., http://armhels.com/2023/11/07/հավաքների-ազատության-մշտադիտարկում-4/
- Հաշվետվություն «Հայաստանի թվայնացման ռազմավարությունը, ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին» ՀՀ Կառավարության 11.02.2021թ. թիվ 183-Լ որոշման կատարման վերաբերյալ մարտի 1-ի դրությամբ, 31.03.2023, Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, https://hightech.gov.am/ֆինանսական-տեղեկատվություն/հաշվետվություններ/
- Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ԶԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2023թ. առաջին եռամսյակային զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 21.04.2023, https://khosq.am/reports/հայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-33/:
- Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ԶԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2023թ. երկրորդ եռամսյակային զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 27.07.2023, https://khosq.am/reports/հայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-34/
- Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ԶԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2023թ. երրորդ եռամսյակային զեկույց, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, 24.10.2023, https://khosq.am/reports/հայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-35/
- Ուղեցույցներ, ՀՀ արդարադատության նախարարություն, https://www.moj.am/page/610
- Freedom in the World 2023: Armenia, Freedom House, https://freedomhouse.org/country/armenia/freedom-world/2023
- Freedom on the Net 2023: Armenia, Freedom House, https://freedomhouse.org/country/armenia/freedom-net/2023

VII. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

«ՔՀԿ ՉԱՓԻՉ» ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐ

- Արփինե Հակոբյան, «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ նախագահ
- Դավիթ Ամիրյան, Քաղաքացիական հասարակության հարցերով փորձագետ, «Հոգեբանների հայկական գիտական միավորում» ՀԿ խորհրդի նախագահ
- Տաթևիկ Ղարիբյան, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի ծրագրի ղեկավար

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

- Անահիտ Չիլինգարյան, իրավաբան
- Աննա Ավագյան, «Գործուն քաղաքացիական հասարակություն» ծրագրի ղեկավարի տեղակալ
- Արաքս Մելքոնյան, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ նախագահ
- Արփինե Հակոբյան, «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ նախագահ
- Դավիթ Ամիրյան, Քաղաքացիական հասարակության հարցերով փորձագետ, «Հոգեբանների հայկական գիտական միավորում» ՀԿ խորհրդի նախագահ
- Լուսինե Հակոբյան, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ծրագրի ղեկավար
- Նաիրա Սուլթանյան, Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի տնօրեն
- Սամվել Մարտիրոսյան, CyberHUB համահիմնադիր
- Տաթևիկ Ղարիբյան, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի ծրագրի ղեկավար
- Օլգա Ազատյան, Միավորված ազգերի կազմակերպության կանանց հիմնադրամի ծրագրերի ղեկավար

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

- Աննա Ավագյան, «Գործուն քաղաքացիական հասարակություն» ծրագրի ղեկավարի տեղակալ
- Արթուր Սաքունց, Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ

- Արտաշես Սերգոյան, «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ
- Աշոտ Մելիքյան, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ
- Գևորգ Հայրապետյան, Անձնական տվյալների պաշտպանության փորձագետ
- Շուշան Դոյդոյան, «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ նախագահ
- Սամվել Մարտիրոսյան, CyberHUB համահիմնադիր
- Սեյրան Մարտիրոսյան, Սախարովի անվան մարդու իրավունքների կենտրոնի Շիրակի մասնաճյուղի ղեկավար
- Քրիստինե Բարսեղյան, «Հետք» ՍՊԸ տնօրեն
- Վարդինե Գրիգորյան, Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ժողովրդավարական ինստիտուտների մոնիթորինգի և զեկուցման համակարգող
- Տաթևիկ Խաչատրյան, Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի ծրագրերի ավագ ղեկավար

ՖՈԿՈՒՍ-ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

- Անահիտ Երնջակյան, «Մարդը կարիքի մեջ» բարեգործական ՀԿ
- Անահիտ Նահապետյան, Արմավիրի զարգացման կենտրոն
- Արա Սուքիասյան, «Երեխաների հասարակություն. մանկապատանեկան ձեռնարկումների աջակցության կենտրոն» ՀԿ
- Արարատ Ալիխանյան, «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՀԿ
- Գայանե Աղաբալյան, Մանկական զարգացման հիմնադրամ
- Գևորգ Քոթանջյան, Էլիտա Սեֆերյան, «Ուղղակի ժողովրդավարություն» ՀԿ
- Էլինա Գյուրջյան, Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ
- Հայկազ Ֆանյան, «Սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամ
- Հարություն Վերմիշյան, «Սոցիես» փորձագիտական կենտրոն ՀԿ
- Հերմինե Դիլանչյան, «ՏԱՐՈՆ» երիտասարդական զարգացման ՀԿ
- Հռիփսիմե Կիզոգյան, «Փինք» իրավապաշտպան ՀԿ
- Մանուշ Հովնանյան, «Աջակցություն կանանց և երեխաներին» ՀԿ
- Մարո Մաթոսյան, «Կանանց աջակցության կենտրոն» ՀԿ
- Մերի Դավթյան, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ
- Նաիրի Չամիչյան, «Հայ աղջիկների առաջնորդությունը ֆուտբոլում» կրթական հիմնադրամ

- Նարինե Մաթևոսյան «ՄեդիաԱկումբ» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ
- Նունե Սարգսյան, «ՍԷՄԱՆՏ» սոցիալ-կրթական ՀԿ
- Նվարդ Փիլիպոսյան, «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ
- Շուշանիկ Սահակյան, «Երիտասարդական գաղափարներ» ԵՀԿ
- Ջուլիա Ամիրաղյան, «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ
- Սուսաննա Շահնազարյան, Գորիսի մամուլի ակումբ
- Քրիստինա Բաղդասարյան, «Կանանի» սոցիալ-հոգեբանական կենտրոն ՀԿ
- Օլգա Բաղդասարյան, «ՍՎԵՏՈԶԱՌ» կրթական ՀԿ